

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱՐՄԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական խորհրդատու՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր

Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տ.գ.դ., պրոֆեսոր

Գրիգոր Եղիշի Կիրակոսյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Սարգիս Լևոնի Ղանթարջյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Արմենակ Վաղարշակի Ղարբինյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. ապրիլի 16-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. մարտի 16-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Ս.Ա. Գևորգյան

ԱՆԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտության քննալի արդիականությունը: Կառավարման և առաջնորդման երևույթների բացահայտմանը նվիրված հետազոտությունները ցույց են տալիս, որ արդի պայմաններում կառավարման մարմինների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի կառավարման այնպիսի համակարգի ձևավորումը, որը հնարավորություն կտա պատշաճ մակարդակով խրախուսելու աշխատակիցներին, կօժտի նրանց լիազորությունների նշանակալից շրջանակով կազմակերպության նպատակներին և վերջնական արդյունքում առաքելությամբ հասնելու համար: Ինչ խոսք, կառավարման արդյունավետ համակարգերում անհատ կառավարիչները և առաջնորդները էական դեր են խաղում համապատասխան համակարգի հաջողության հասնելու գործում: Բայցևայնպես, նրանց ներդրումը նշանակալիորեն կարող է տարբերվել՝ կախված մշտապես փոփոխվող ներքին և արտաքին միջավայրերի պայմաններում մարդկանց կառավարելու անհատական կարողություններից: Ուսումնասիրելով առաջնորդման ոճերին առնչվող գրականությունը՝ կարելի է ընդհանրացնել, որ հեղինակների մեծ մասը առաջնորդման ոճերի կամ կառավարման համակարգերի մեջ արդի հարափոփոխ և օրեցօր բարդացող գործարար հարաբերությունների պայմաններում լավագույնն է համարում առաջնորդման մասնակցային ոճը կամ մասնակցային կառավարման համակարգը: Վերջինս հատկապես սկսել է կարևորվել մրցակցության սրման պայմաններում՝ շնորհիվ կազմակերպական և մարդկային արժեքների ձևավորման գործում ունեցած կարևորության: Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ ժամանակակից պայմաններում վերացել են ղեկավարների և ենթակամների կրթական և մասնագիտական մակարդակների նախկինում եղած զգալի տարբերությունները: Այս առումով, կառավարման բարձր արդյունավետության հասնելու համար այլ հավասար պայմաններում կարևոր է կիրառել մասնակցային ոճը, որը սիներգիկ (համագործակցային) արդյունք կարող է ապահովել: Հետևաբար՝ այս մոտեցումը համարվում է արդի պայմաններում կայուն առաջնորդման կարևորագույն նախապայման: Այս առումով, մասնակցային կառավարման երևույթը կարելի է դիտարկել որպես **կառավարման ներկա հարացույցի դրսևորում:** Գործնական կառավարման և գիտության զարգացման ժամանակակից միտումների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ կառավարման արդյունավետության բարձրացման առաջիկա գերակայությունները պայմանավորված են լինելու գերազանցապես վերը ներկայացված գործոնների համատեղ ներագդեցությամբ, որոնցից յուրաքանչյուրը առանձին և ամբողջության մեջ անհրաժեշտաբար պահանջելու են որոշումների ընդունման և դրանց իրագործման գործընթացներում ապահովել կառավարման համակարգի գրեթե բոլոր անդամների անհատական և խմբային մասնակցությունը՝ օգտագործելով հնարավոր բոլոր ռեսուրսները աստիճանաբար սրվող մրցակցության պայմաններում հաջողության հասնելու նպատակով: Մասնակցային կառավարումը կարելի է նաև դիտել որպես **կառավարման ժողովրդավարացման** առանցքային ուղի: Վերջինս բնական և այլևս անշրջելի մի գործընթաց է, որը բնորոշ է ոչ միայն կազմակերպություններին այլ նաև հանրային կառավարման համակարգին: Հանրային կառավարման մակարդակում ժողովրդավարացման օբյեկտիվ գործընթացը պայմանավորված է մի շարք գործոններով: Ժամանակակից գրականության մեջ դրանց հարաբերական նշանակությունը կարող է տարբերվել, սակայն, ընդհանուր առմամբ, գործոնները նույնն են: Դիտարկումները ցույց են տալիս, որ ժողովրդավարացման մակարդակը շատ ցածր էր մինչև արդյունաբերական հեղաշրջումը: Եվ այս առումով, էմպիրիկ հետազոտությունները վկայում են, որ տնտեսական զարգացումը բարձրացնում է տվյալ հասարակությունում կառավարման ժողովրդավարացման հնարավորությունները: Հասարակության կրթության մակարդակի աճը և աստիճանաբար հանգեցնում է կառավարման ժողովրդավարացմանը: Այս առումով՝ կառավարողների և կառավարվողների միջև **գիտելիքների աստիճանական հավասարեցման** միտումն է, որ նպաստում է կառավարման ժողովրդավարացմանը և հաղորդում դրան մասնակցային բնույթ: Ժողովրդավարացման ժամանակակից գործընթացը որոշ հեղինակների կողմից բացատրվում է նաև շուկայական տնտեսության զարգացմամբ: Այս տեսությունը հենվում է այն հիմնարար գաղափարի վրա, որ ժողովրդավարու-

թյունը և շուկայական տնտեսությունը ազատության երկու տարբեր, բայց միմյանց հետ շաղկապված դրսևորումներ են:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգը ձևավորվել է ոչ վաղ անցյալում և ներկայումս գտնվում է զարգացման փուլում: Այս առումով, դեռևս շատ խնդիրներ կան, որոնք պետք է ժամանակի ընթացքում իրենց լուծումը ստանան: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ապակենտրոնացման գործընթացների շարունակական իրականացմանը, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքների բարելավմանը, միջհամայնքային միավորումների ձևավորմանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների կատարելագործմանը, ինչպես նաև մի շարք այլ հարցերի: Մասնակցային կառավարումը Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի, թերևս, ամենաքիչ ուսումնասիրված ոլորտն է: Տեղական ինքնակառավարման համակարգը բազմաթիվ ուղղություններով առաջընթաց է ունեցել՝ թե՛ տեսական մտքի զարգացման, և թե՛ փաստացի գործունեության առումներով, սակայն բնակիչների՝ իրենց կենսագործունեության վրա անմիջական ազդեցություն ունեցող որոշումների ընդունմանը մասնակցելու հնարավորությունը նոր ձևավորվող երևույթ է մեր երկրում: Հայաստանի Հանրապետությունը 2010թ.-ին վավերացրել է Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրի լրացուցիչ արձանագրությունը տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին՝ ստանձնելով օրենսդրական նոր պարտավորություններ: Այս համատեքստում պետք է նշել, որ թեև ՀՀ մի շարք օրենքներով որոշակիորեն կարգավորվում է մասնակցության գործընթացը, սակայն տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս անհրաժեշտ չափով չեն կարևորում այն, իսկ օրենսդրական պահանջների նկատմամբ վերաբերմունքը հաճախ ձևական բնույթ է կրում: Լավագույն դեպքում դրա հետ կապված գործառույթները սահմանափակվում են տեղեկատվության տրամադրմամբ և իրազեկմամբ: Մյուս կողմից՝ բնակիչների մեծ մասը ևս պատրաստ չէ ակտիվ մասնակցություն ունենալու իրենց համայնքի կառավարմանը: Պատճառները շատ են և տարաբնույթ՝ օրենսդրական կարգավորման խնդիրներից մինչև ազգային մշակութային առանձնահատկություններ: Միևնույն ժամանակ, տնտեսությունների ներկայիս վերընթաց զարգացման և ապակենտրոնացման համաժամանակյա մարտահրավերները կառավարման մարմիններին մի կողմից՝ պարտադրում են, մյուս կողմից՝ հնարավորություն են ընձեռում վերագիտակցելու և վերարժևորելու իրենց գործունեության հիմնարար ուղղությունները և կառավարման միավորների զարգացման հետագա հնարավորությունները: Տնտեսության կառավարման ավանդական, պահպանողական մոտեցումները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում հնարավոր ձախողման պատճառ կարող են հանդիսանալ՝ հանգեցնելով կառավարման համակարգի հանգուցային տարրերի գործունեության խափանմանը: Հատկապես, տնտեսության բնագավառում տեղի ունեցող արագ փոփոխությունները հրամայաբար պահանջում են ստեղծել կառավարման ճկուն և փոփոխություններին հարմարվող համակարգեր: Իրականում, այդ փոփոխությունները պայմանավորված են բազմաթիվ գործոններով, և գրեթե ամենար է մեկուսացված դիտարկել դրանց առնչվող պատճառները և հետևանքները: Այս փոխկապվածությունն է, որ ենթադրում է առավել առաջանցիկ մոտեցումներ ցուցաբերել համայնքների և նրանց տնտեսություններում կատարվող փոփոխությունների կառավարմանը՝ չսահմանափակվելով գերակշռաբար վերահսկողության վրա խարսխված կառավարչական մտածելակերպով: Երևույթը դիտարկելով գործնական տեսանկյունից՝ կարելի է պնդել, որ **արդի պայմաններում կառավարման հիմնախնդիրների լուծումը հնարավոր է միայն տարբեր շահառուների ներգրավման և նրանց միջև կապ ու համագործակցության դաշտ ստեղծելու միջոցով, ինչի նախաձեռնողը պետք է լինեն կառավարման մարմինները**: Շահառուների դաշտը շատ լայն է, քանի որ կառավարման գործընթացը կարող է առնչվել բազում սուբյեկտների և նրանց խմբերի: Մասնակցային կառավարման հիմնական մոտեցումը այդ շահառուների միջոցով կառավարման խնդիրների համատեղ լուծման մշտական գործընթացն է, ինչի արդյունքում հնարավոր կլինի ստանալ որոշակի նպատակային արդյունքներ

համագործակցությունից և *ապահովել դրական սիներգիա*: Այս առումով, *տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման զարգացման գաղափարը աշխատանքի շրջանակներում դիտարկվում է իբրև ավելի լայն խնդիր, քան սոսկ տեղի բնակիչների մասնակցությունը կառավարման գործընթացներին*:

Մասնակցային կառավարումը արդեն իսկ լայնորեն կիրառվում է հատկապես կառավարման զարգացած համակարգերում՝ որպես մարդկանց նպատակամիտված աշխատանքը երաշխավորելու ուղի: Եվ հետևաբար՝ դրա էությունը և բնույթը ուսումնասիրվել է նաև զանազան էնպիրիկ հետազոտությունների միջոցով: Դրանք փաստում են, որ մասնակցային կառավարումը դրականորեն է կապված հատկապես երկարաժամկետ թիմային արդյունքների հետ: Նույն հետազոտությունները վկայում են, որ միահեծան ոճերը արդյունավետ կարող են լինել միայն որոշակի իրավիճակներում: Հիմնված տարբեր տեսակի հետազոտությունների վրա՝ տեսաբանների մի մասը բացահայտել է մասնակցային կառավարման ազդեցությունը աշխատակիցների վարքագծի վրա: Մի շարք այլ հետազոտություններ վկայում են, որ մասնակցային կառավարումը շեշտակիորեն բարձրացնում է աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք ունենալու հավանականությունը: Սակայն, հարկավոր է փաստել, որ թեև «մասնակցային կառավարում» եզրույթը վերջին ժամանակաշրջանում մեծ կիրառություն է ստացել, տեսաբանները տարբեր կերպ են բնութագրում այն: Ժամանակակից գրականության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ բացակայում է այդ հասկացության հետ կապված հստակությունը: Տեսաբաններն օգտագործում են զանազան հասկացություններ՝ բնութագրելու համար մասնակցային կառավարման երևույթը՝ մասնակցություն, աշխատակիցների ներգրավվածություն, խորհրդակցություն, որոշումների համատեղ ընդունում, իշխանության բաշխում, ապակենտրոնացում, ժողովրդավարական կառավարում, գործընկերություն, զորացում և այլն: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում հստակորեն սահմանելու մասնակցային կառավարման հասկացությունը, ճշգրտելու դրա էությունը, որպեսզի հնարավոր լինի խուսափել թյուրիմացությունից և շփոթից:

Միևնույն ժամանակ, համաաշխարհային գրականության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ հանրային կառավարման համակարգում մասնակցային կառավարման հասկացությունը գերազանցապես դիտարկվում է որպես տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում: Շատ դեպքերում այս հարթությունում «մասնակցային կառավարում» և «կառավարմանը բնակիչների մասնակցություն» հասկացությունները պարզապես նույնացվում են: Այլ կերպ՝ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարումն ընկալվում է նեղ ըմբռնմամբ՝ չդիտարկելով տեղական ինքնակառավարման այլ շահառուների մասնակցության հնարավորությունները, նշանակությունը և կառուցակարգերը: Մեր երկրում կատարվել են բազում արժեքավոր հետազոտություններ տեղական ինքնակառավարման ոլորտում, դրանց թվում նաև՝ մասնակցային կառավարման առնչվող որոշ հատվածական հետազոտություններ, սակայն ամբողջական անդրադարձ չի կատարվել մասնակցային կառավարման հիմնախնդիրների և զարգացման ուղղությունների բացահայտմանը: Մասնավորապես՝ ճշգրտված չէ մասնակցային կառավարման էությունը, հստակեցված չեն մասնակցության տեսակները, սուբյեկտները, մշակված չեն համապատասխան կառուցակարգեր: Բացի դրանից, բացակայում են նաև ՀՀ-ում մասնակցային կառավարման զարգացման հնարավորությունները փաստացիորեն գնահատող հետազոտությունները: Իսկ վերը ներկայացված մոտեցմամբ մասնակցային կառավարման նշյալ խնդիրների համընդգրկուն հետազոտությունները շատ քիչ են նաև համաաշխարհային գիտական ասպարեզում: Հաշվի առնելով վերոնշյալ իրավիճակը և խնդիրները՝ ինքնըստինքյան ակնհայտ է դառնում տվյալ թեմայի ոչ միայն արդիականությունը, այլև մանրամասն ուսումնասիրելու անհրաժեշտությունը և հրատապությունը:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգն է՝ իր կառուցվածքային առանձնահատկություններով, վարչատարածքային

բաժանման հիման վրա կազմավորված համայնքներով, ինչպես նաև շահառուների մեծ թվով:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան մասնակցային կառավարման զարգացման ուղղություններն են, որոնք ներկայումս դիտվում են տեղական ինքնակառավարման համակարգում, ինչպես նաև դրա հետագա ընթացքը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակը մասնակցային կառավարման մեթոդաբանության զարգացումն է և դրա հիման վրա՝ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման արմատավորման և բարելավման ուղղությունների մշակումը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության խնդիրները բխում են սահմանված նպատակի իրագործման համար անհրաժեշտ քայլերի տրամաբանությունից.

- բացահայտել մասնակցային կառավարման ելությունը, դրա կայացման և զարգացման ընթացքը,
- ուսումնասիրել կառավարման հարացույցի և առաջնորդման ոճերի զարգացման ժամանակակից միտումները,
- հիմնավորել մասնակցային կառավարման անհրաժեշտությունը արդի պայմաններում,
- ուսումնասիրել մասնակցային կառավարման մեթոդաբանությունը և հետագա դրա կատարելագործման ուղիները,
- բացահայտել տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման դերը և նշանակությունը,
- բացահայտել մասնակցային բյուջետավարման հայեցակարգի ելությունը և կարևորությունը,
- ուսումնասիրել ՀՀ համայնքները՝ որպես կառավարման յուրահատուկ օբյեկտ,
- ուսումնասիրել մասնակցային կառավարման առաջատար փորձը, ինչպես նաև դրա կիրառելիության հնարավորությունները հանրային կառավարման տարբեր համակարգերում,
- դիտարկել տեղական ինքնակառավարմանը մասնավոր հատվածի մասնակցության արդի կառուցակարգերը,
- վերհանել ՀՀ-ում մասնակցային կառավարման գործընթացի օրենսդրանորմատիվային կարգավորման կառուցակարգերը,
- գնահատել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ներկա աստիճանը,
- հիմնավորել խոշոր քաղաքներում մասնակցային կառավարման անհրաժեշտությունն արդի պայմաններում,
- բացահայտել Երևանի՝ որպես խոշոր քաղաքի կառավարման առանձնահատկությունները և հիմնախնդիրները,
- քանակապես չափել տեղական ինքնակառավարմանը բնակիչների ուղղակի մասնակցության ներկա ներուժը և մասնակցությունը պայմանավորող գործոնները,
- բացահայտել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հիմնական խոչընդոտները,
- գնահատել մասնակցության ներկա կառուցակարգերի նպատակահարմարությունը,
- մշակել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության նոր կառուցակարգեր՝ հիմնված նախապես բացահայտված հիմնախնդիրների լուծման վրա,
- վերհանել մասնակցային կառավարման զարգացման ուղղությունները Երևան քաղաքում պայմանավորված Երևանի կառավարման կառուցվածքային առանձնահատկություններով,

- ուսումնասիրելով համագործակցության հնարավորությունները՝ մշակել և առաջարկել նոր մոտեցումներ տեղական ինքնակառավարմանը կազմակերպությունների մասնակցության ապահովման ուղղությամբ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը կազմում են ընդհանուր առմամբ մասնակցային կառավարմանը, տեղական ինքնակառավարմանը և տարածքային կառավարմանը վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, տեղական ինքնակառավարման միջազգային փորձի վերաբերյալ աշխատությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման հիմնախնդիրներին առնչվող տեսական նյութերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են կառավարման ոլորտում գիտական հետազոտությունների իրականացման մի շարք ընդհանուր մեթոդներ, ինչպիսիք են վերլուծության և համադրության, արտածման և մակածման, փաստաթղթերի դիտարկման մեթոդները: Հետազոտության որոշ խնդիրների լուծման համար օգտագործվել է քանակական վերլուծությունների մի ամբողջ համալիր: Մասնավորապես՝ առաջնային հետազոտության ընթացքում փորձագիտական հարցումների շնորհիվ հավաքագրվել են բնակիչների, ինչպես նաև մասնավոր հատվածի մասնակցության վերաբերյալ տվյալներ: Այստեղ կիրառվել են հարցաթերթիկային հարցումները, հարցազրույցները և փորձագիտական հարցումների համար անհրաժեշտ այլ գործիքներ: Բացի դրանից, հավաքագրված քանակական տվյալները օգտագործվել են ինչպես համապատասխան տնտեսագիտական հաշվարկների, այնպես էլ տնտեսաչափական վերլուծությունների համար: Մասնավորապես՝ SPSS ծրագրի գործարկման միջոցով մշակվել է բնակիչների պոտենցիալ մասնակցության լոգիտ ռեգրեսիոն մոդելը:

Հետազոտության տեղեկատվական հիմքը: Բացի տեղեկատվական տվյալների հավաքագրման վերը նկարագրված առաջնային աղբյուրներից, հետազոտության տեղեկատվական հիմքը ներառում է նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալները, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Տարածքային կառավարման և ՀՀ Ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև այլ գերատեսչությունների հրապարակումները: Օգտագործվել են քաղաքների կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում գործունեություն ծավալող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակված վերլուծությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և այլ երկրների՝ մասնակցային կառավարմանն առնչվող իրավական ակտերը:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը ամփոփվում է ընդհանուր առմամբ մասնակցային կառավարման տեսական հենքի և մեթոդաբանության մշակմամբ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգում զարգացման ուղղությունների բացահայտմամբ, ինչը ՀՀ-ում նմանատիպ առաջին փորձն է: Մասնավորապես՝ գիտական նորույթ պարունակվում է հետազոտության հետևյալ արդյունքներում՝

- բացահայտելով կառավարման հարացույցի, ինչպես նաև առաջնորդման ոճերի փոփոխության արդի միտումները՝ հստակեցվել են մասնակցային կառավարման դրսևորումները խմբային կառավարման զարգացման համատեքստում,
- հստակեցվել է մասնակցային կառավարման էությունը, բնութագրվել են մասնակցային կառավարման գործոնները և կառուցակարգերը,
- Վերհանելով հանրային կառավարման համակարգի զարգացման ժամանակակից օրինաչափությունները՝ մասնակցային կառավարումը բնութագրվել է իբրև կառավարման ժողովրդավարացման առանցքային ուղի,
- բնութագրվել են տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման ազգային առանձնահատկությունները,

- մասնակցային կառավարման գործընթացը կարգավորող օրենսդրանորմատիվային դաշտի համակարգային վերլուծության հիման վրա՝ նախապես հիմնավորված «մասնակցության սանդղակի» մեթոդաբանությամբ գնահատվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության աստիճանը,
- վերհանելով խոշոր քաղաքների զարգացման ժամանակակից միտումները՝ բացահայտվել են մասնակցային կառավարման առանձնահատկությունները խոշոր քաղաքներում,
- երկակի լոգիտ ռեգրեսիայի մեթոդաբանության կիրառմամբ կատարվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բազմագործոնային վերլուծություն և մշակվել է պոտենցիալ մասնակցությունը կանխատեսող տնտեսաչափական մոդելը,
- քանակական հետազոտության միջոցով բացահայտվել է բնակիչների եկամուտների մակարդակի և կառավարմանը ուղղակի մասնակցության միջև կապը,
- բացահայտելով երևանում գործող կազմակերպությունների՝ քաղաքի կառավարմանը մասնակցելու հիմնական խոչընդոտները՝ մշակվել է մասնակցային բյուջետավարման ներդրման նոր հայեցակարգ՝ հիմնված կազմակերպությունների ուղղակի մասնակցության վրա,
- փորձագիտական հարցումների և քանակական վերլուծությունների միջոցով նախապես վերհանելով տեղական ինքնակառավարմանը բնակիչների ակտիվ մասնակցության հիմնական խոչընդոտները՝ մշակվել է ֆինանսական իրական լծակներով օժտված «մասնակցային խորհուրդների» նոր կառուցակարգ և հիմնավորվել է վերջինիս ստեղծման նպատակահարմարությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունն արտահայտվում է տեղական ինքնակառավարման համակարգում արդյունավետ մասնակցային կառավարման գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակման մեջ, իսկ ատենախոսության գիտական արդյունքների, այդ թվում՝ առաջարկությունների կիրառումը, կարող է օգտակար լինել տեղական ինքնակառավարման նոր համակարգի կազմավորման և կատարելագործման համար: ՀՀ նյութերով ստացված արդյունքները կարող են կիրառելի լինել նաև տեղական ինքնակառավարման այլ համակարգերում մասնակցային կառավարման զարգացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են ՀՀՊՏՀ-ի կառավարման ամբիոնի նիստում, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության (2014թ.) և Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիայի կողմից կազմակերպվող տարեկան գիտաժողովներում, Գյուղական համայնքների երրորդ համաժողովի ընթացքում, ինչպես նաև միջազգային հինգ գիտաժողովներում: Ատենախոսության արդյունքներն արտացոլվել են հեղինակի 34 գիտական հրապարակումներում, այդ թվում՝ 10 հոդված օտարերկրյա ամսագրերում և ժողովածուներում, ինչպես նաև 4 մենագրություն:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է գիտական հետազոտության նպատակով, խնդիրներով և տրամաբանությամբ: Ատենախոսությունը շարադրված է 317 էջի վրա (առանց հավելվածների), բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածների բաժնից, ներառում է 23 գծապատկեր, 28 աղյուսակ և 2 նկար:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «Մասնակցային կառավարման էությունը և տեսանկյունային հիմքերը» գլխում ճշգրտվել է մասնակցային կառավարման էությունը, հիմնավորվել է մասնակցային կառավարման նշանակությունն արդի պայմաններում, դրա կայացման և զարգացման ընթացքը, ներկայացվել են մասնակցային կառավարման մեթոդները, անդրադարձ է կատարվել նաև տարբեր հարթություններով հանրային կառավարման համակարգում մասնակցային կառավարման դրսևորման ձևերին:

Ուսումնասիրելով առաջնորդման ոճերին առնչվող գրականությունը՝ աշխատանքում ընդհանրացվում է, որ հեղինակների մեծ մասը առաջնորդման ոճերի կամ կառավարման համակարգերի մեջ արդի հարափոփոխ և օրեցօր բարդացող գործարար հարաբերությունների պայմաններում լավագույնն է համարում առաջնորդման մասնակցային ոճը կամ մասնակցային կառավարման համակարգը, ինչն առավել մեծ հաջողությամբ կարող է աշխատակիցներին նպատակաուղղել արդյունավետ աշխատանքի: Մասնակցային կառավարման դրական ազդեցությունը կազմակերպության գործունեության արդյունավետության վրա հաստատվում է բազում փաստերով: Կատարված մի շարք փորձնական հետազոտություններ վկայում են, որ մասնակցային կառավարումը բարելավում է մարդկանց աշխատանքը, ինչպես նաև բարձրացնում է աշխատանքից բավարարվածության աստիճանը: Բացահայտվել է նաև, որ ինքնուրույնությունը, առաջադրանքների հստակությունը, անվտանգությունը զգացումը, ինչպես նաև բավարարվածության աստիճանը կառավարման մասնակցային ոճի մշտական ուղեկից գործոններն են¹: ***Սյլ կերպ՝ մասնակցային կառավարման ազդեցությունը փաստացի արդյունքների վրա միջնորդավորվում է աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմամբ: Իսկ վերջինս իր հերթին արդեն հանգեցնում է աշխատանքի փաստացի արդյունքների բարելավմանը:*** Մասնակցային կառավարման երևույթը կարելի է դիտարկել որպես ***կառավարման ներկա հարացույցի դրսևորում:*** Մասնակցային կառավարման հիմնական առանցքը մարդկային ռեսուրսների նրանց գիտելիքների, հմտությունների, տաղանդի, մտքերի, ներքին ձգտման օգտագործումն է՝ կառավարման տվյալ համակարգի բոլոր անդամների առավելագույն աշխատանքային ներդրումը ապահովելու նպատակով: Անդրադառնալով մասնակցային կառավարման բնորոշմանը՝ նշվում է, որ, թեև «մասնակցային կառավարում» եզրույթը վերջին ժամանակաշրջանում մեծ կիրառություն է ստացել, տեսաբանները տարբեր կերպ են բնութագրում այն: Յետևաբար՝ ատենախոսության մեջ կարևորվում է մասնակցային կառավարման հասկացության հստակ սահմանումը, որպեսզի հնարավոր լինի խուսափել թյուրիմացությունից և շփոթից: ***Ատենախոսության շրջանակներում մասնակցային կառավարումը ներկայացվում է լայն ընթացմամբ՝ դիտարկելով այն որպես կառավարմանը ցուցաբերվող մոտեցում, որի պարագայում կառավարիչները համակարգված կերպով օգտագործում են անհատների կամ նրանց խմբերի մարդկային ռեսուրսները՝ դրական արդյունք ապահովելու նպատակով: Կառավարմանը ցուցաբերվող այս մոտեցումը միտված է զորացնելու կազմակերպության բոլոր անդամներին և բարձրացնելու կազմակերպության գործունեության արդյունավետությունը դեկավարների և ենթակամների միջև իշխանության և լիազորությունների աստիճանական բաշխման միջոցով:***

Համաշխարհային խոշոր կազմակերպությունների կառավարման մարմինները նույնպես գիտակցում են, որ իրենց կազմակերպությունները գործունեությունը և արդյունքները մեծապես կախված են լիազորությունների արդյունավետ բաշխումից, որի դեպքում դրանից անմասն չեն մնա բոլոր աշխատակիցները²: Պատճառն այն է, որ ինչպես արդեն այժմ, այնպես էլ հատկապես ապագայում կազմակերպությունները և կառավարման համակար-

¹ Huang, X., Iun, J., Liu, A. Gong, Y. 2010. Does participative leadership enhance work performance by inducing empowerment or trust? The differential effects on managerial and non-managerial subordinates. Journal of Organizational Behavior, 31, pp. 122-143.
² Angermeier, I., Dunford, B.B., Boss, A.D., Smith, R.H., Boss, R.W. 2009. The impact of participative management perceptions on customer service, medical errors, burnout, and turnover intentions. Journal of Healthcare Management, 54(2), pp. 127-141.

գերը պահանջելու են կառավարման և առաջնորդման այնպիսի ոճեր, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն առկա բոլոր տարանդների և կարողությունների առաջնդման կազմակերպության հաջողության հասնելու համար: ***Այս իրավիճակում կառավարիչները կամ առաջնորդները աստիճանաբար ձգտում են կառավարման այնպիսի համակարգի, որը ոչ այնքան կառավարվում է վերևից, որքան որ ներսից՝ իբրև համագործակցության վրա հիմնված թնային կառավարում:*** Այսպիսով, մասնակցային կառավարման ոճը ներկայանում է իբրև ռազմավարական մոտեցում արդյունավետորեն օգտագործելու մարդկային ռեսուրսները փոփոխվող իրավիճակում հաջողության հասնելու համար: Ներկայացված ***մարտահրավերներին դիմակայելու համար խմբային մասնակցության մոդելը համարվում է լավագույնը՝ մի կողմ մղելով թե՛ միահեծան և թե՛ ազատական մոդելները: Որպեսզի հնարավոր լինի արծազանքել գլոբալ հիմնայնդիրներին, կառավարման համակարգերը կարիք ունեն լրացուցիչ ազդակների, որոնք կարող են ձեռք բերվել ի հաշիվ կազմակերպական բոլոր ռեսուրսների լավագույն օգտագործման:***

Աշխատանքում կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ մասնակցային կառավարումը ***հանրային կառավարման*** համակարգում ևս նախանշում է որոշումների ընդունման, և, ընդհանրապես, կառավարման ամբողջ գործընթացի սկզբունքորեն նոր ուղղություն՝ դեպի համընդգրկուն զարգացման մոտեցման ձևավորում կապակցելով կայունությունը, սոցիալական արդարությունը, տնտեսական զարգացումը և մշակութային ազատությունը: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ նշվում է, որ հաճախ անտեսվում է այն հանգամանքը, որ հանրային ոլորտում սահմանակարգերի արդյունավետ գործունեությունը պահանջում է հստակորեն մշակված և օրենքի ուժով պարտադրող ընթացակարգերի գոյություն: Այդ պատճառով հայեցակարգերի և կառուցակարգերի փաստացի գործարկման համար անհրաժեշտ պայման է քաղաքականության, օրենսդրական նորմերի, ուղեցույցների և այլ տեսակի ձևական կանոնների մշակումը և կիրառումը: Մասնավորապես՝ հանրային կառավարման մարմինները պետք է մշակեն համապատասխան կարգեր մասնավոր հատվածի և բնակիչների մասնակցության ապահովման, ինչպես նաև այլ շահառուների հետ համատեղ աշխատանքի համար: ***Առանց հստակ կանոնների, ընթացակարգերի և քաղաքականության՝ մասնակցային կառավարումը չի կարող արդյունավետորեն գործել:*** Այսպիսի կարգերի և քաղաքականության նշանակությունն այն է, որ դրանք պակասեցնում են անորոշությունը, և կառավարման շահառուները առավել լավ են պատկերացնում են իրենց դերը մասնակցություն ունենալու գործում: Ձևական ընթացակարգերի առկայությունը այն հենքն է, որի միջոցով առավել հստակեցվում են յուրաքանչյուր կողմի իրավունքները և պարտավորությունները, ինչն անխուսափելիորեն նպաստում է կառավարման գործընկերության վրա հիմնված մոտեցմանը:

Ատենախոսության երկրորդ՝ «Մասնակցային կառավարումը տեղական ինքնակառավարման համակարգում» գլխում ներկայացվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության նշանակությունը, մասնակցային բյուջետավարման էությունը և նշանակությունը ժամանակակից պայմաններում, քննարկվել է մասնակցային կառավարման համաշխարհային փորձը՝ տարբեր չափի տեղական ինքնակառավարման միավորների օրինակով, լուսաբանվել է հանրային և մասնավոր գործընկերության նշանակությունը տեղական ինքնակառավարման համակարգում:

Աշխատանքում նշվում է, որ համայնքի մակարդակով մատուցվող ծառայություններն ունեն այն առանձնահատկությունը, որ ուղղակիորեն առնչվում են բնակիչների առօրյա խնդիրներին, և վերջիններս անմիջապես զգում են այդ ազդեցությունն իրենց կենցաղում: Ուստի՝ համայնքի բնակիչները պետք է իրական մասնակցություն ունենան տեղական ինքնակառավարմանը: Ընդ որում, կառավարման ավելի փոքր միավորները հաջողությամբ կարող են ապահովել քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը: Որքան կառավարման օբյեկտը մեծ է, այնքան ավելի հավանական է, որ որոշակի խմբերի շահերը կգերակշռեն քաղաքացիների մասնակցությանը: Մասնագիտական գրականության մանրա-

զնին ուսումնասիրությունը վկայում է, որ չկան այնպիսի հեղինակներ, ովքեր դեմ են բնակիչների մասնակցության գաղափարին կամ այն համարում են բացասական գործընթաց: Այս երևույթի պատճառներից մեկը նաև այն է, որ բնակիչների մասնակցությունը, ըստ շատ հեղինակների, դրական ազդեցություն է ունենում անհատ բնակիչների, քաղաքացիների վրա: Հեղինակների մի մասը գտնում է, որ բնակիչների մասնակցությունը արդյունավետ է այն ժամանակ, երբ այն դրական փոփոխություններ է կատարում անհատ բնակիչների գիտակցության և բնավորության մեջ: Հետաքրքիր է, որ այս մոտեցումն ի սկզբանե ձևավորվել է Հին Հունաստանում, սակայն, անշուշտ պետական կառավարման մակարդակում, այլ ոչ տեղական ինքնակառավարման: Մասնավորապես՝ հույն փիլիսոփա Արիստոտելը համարում էր, որ քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետական կառավարմանը «մարդ» լինելու էական գործոններից մեկն է և անհրաժեշտ պայման է «Էվդեմոնիայի»³ հասնելու համար⁴: Այս մոտեցումը հետագայում զարգացվել է նաև փիլիսոփաներ ժամ-ժակ Ռուսոյի և Ջոն Ստյուարտ Միլի կողմից, ովքեր ամփոփել են բնակիչների մասնակցության դերը մարդու քաղաքացիական և բարոյական բնութագրի զարգացման գործում⁵: Ժամանակակից գրականությունը ևս մատնանշում է մի շարք դրական փոփոխություններ, որոնք կարող են ի հայտ գալ անհատի մոտ կառավարմանը մասնակցելու դեպքում: Մասնավորապես՝ Ֆունգը և Ռայթը նշում են, որ կառավարման մարմինները, որոնք ապահովում են բնակիչների մասնակցությունը, գործում են իբրև ժողովրդավարության դպրոցներ, որտեղ մասնակից բնակիչները կարող են ձևավորել և զարգացնել մեծ թվով դրական հատկանիշներ՝ ի օգուտ տվյալ անհատների և, ընդհանուր առմամբ, հասարակությանը⁶: Հանրային խնդիրների վերաբերյալ բնակիչների ընմարկումները կարող են նպաստել անհատների համապատասխան կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հանրային ոգու և բնութագրի ձևավորմանը: Աշխատանքում առաջ է քաշվում նաև այն գաղափարը, որ, բնակիչներին ընդգրկելով որոշումների ընդունման գործընթացում, տեղական ինքնակառավարման մարմինները նպաստում են նաև քաղաքացիական հասարակության ձևավորմանը համայնքում, քանի որ քաղաքացիները «մոտենում են» համայնքի կառավարման գործերին, և դրանով իսկ բարձրանում է նրանց քաղաքացիական պատասխանատվության զգացումը: Միևնույն ժամանակ, նրանք կարողանում են գիտակցել սեփական անձի դերը համայնքի կառավարման գործընթացում, քանի որ իրենց տեսակետը նույնիսկ հնարավոր է որոշակի ազդեցություն ունենա կառավարման մարմինների ընդունած որոշումների վրա: Բնակիչների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին և համայնքի կառավարման մասին որոշակի տեղեկություն ունենալը կարևոր են նաև այն առումով, որ երբ բնակիչները խնդիրներ են ունենում և տեղեկացված չեն լինում, ապա հիմնականում վատագույնն են ենթադրում:

Համայնքի կառավարման ամբողջ գործընթացում կենտրոնական տեղ է զբաղեցնում համայնքի բյուջեն: Այս առումով շատ կարևոր է, որ բնակիչները իրազեկված լինեն և հնարավորության չափով նաև մասնակցություն ունենան իրենց համայնքի բյուջեի մշակման և քննարկման գործընթացներին: Այս առումով, աշխատանքում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս չկա մասնակցային բյուջետավարման որևէ համընդհանուր սահմանում, որն ընդունված կլինի բոլորի կողմից և կարտահայտի այն կոնկրետ չափանիշները, որոնց բավարարելու պարագայում համապատասխան գործընթացին կարելի է այդ անվանումը տալ: Վերոնշյալի համատեքստում հետազոտության արդյունքում նշվում է, որ ***մասնակցային կառավարման սկզբունքների մեջ հատկապես կարևոր է համապատասխան կառուցակարգերի և սահմանակարգերի մշակումը, քանի որ նույնիսկ եթե դրանք ստեղծվում են քաղաքական շարժառիթներով դրդված, միևնույն է՝***

³ «Էվդեմոնիան» հին հունական փիլիսոփայության մեջ բարոյական, մտավոր և հուզական զարգացման բարձրագույն վիճակն է:

⁴ Aristotle, ., & Sinclair, T. A. 1981. *The politics*. Harmondsworth, England: Penguin Books.

⁵ Rousseau, J.-J., & Cole, G. D. H. 2008. *The social contract*. New York, NY: Cosimo, Inc.

⁶ Fung, A., & Wright, E. O. 2003. *Deepening democracy: institutional innovations in empowered participatory governance*. London: Verso.

ունենում են համակարգային նշանակություն և նվազեցնում են սուբյեկտիվ գործոնի բացասական ազդեցությունը կառավարման վրա: Այս պնդումը հիմնված է ուսումնասիրված գրեթե բոլոր համայնքների մասնակցային կառավարման փորձի վրա: Ընդհանուր առմամբ, կարելի է պնդել, որ մասնակցային բյուջետավարումը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության առավելագույն աստիճանի դրսևորման, թերևս, ամենահստակ ձևապահ է: Ահա թե ինչու մասնակցային կառավարման զարգացման միտումները տարբեր երկրներում, այդ թվում՝ եվրոպական, աստիճանաբար հանգեցնում են տեղական մակարդակում մասնակցային բյուջետավարման համակարգի արմատավորմանը: Ուսումնասիրելով աշխարհի տարբեր տեղական ինքնակառավարման միավորների փորձը՝ *ընդգծվում է հաջողության երաշխիք դարձած այն ընդհանրությունը, որ նմանօրինակ բոլոր դեպքերում մասնակցային բյուջետավարման նախաձեռնությունն ի սկզբանե ցուցաբերվել է տեղական իշխանությունների կողմից, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության, ինչպես կարելի է նկատել այլ համայնքների ըստ էության ծախողված փորձերի դեպքում: Դեռիմակի կարծիքով, սա ես մեկ անգամ հաստատում է մասնակցային կառավարման օրենսդրական կարգավորման, որոշակիորեն պարտադրման (ելնելով իրավիճակային գործոններից), ինչպես նաև ձևական կանոնների հաստատման նպատակահարմարությունը:* Ամեն դեպքում, անկախ իր դրսևորման այս կամ այն ձևից, մասնակցային բյուջետավարման հայեցակարգը, ըստ հեղինակի, հանրային կառավարման համակարգում բնակիչների մասնակցության ամենարդյունավետ և գործունե եղանակներից է: Ամփոփելով համաշխարհային փորձի ուսումնասիրությունը՝ նշվում է, որ դիտարկված համայնքներում մասնակցային բյուջետավարման տարբեր մոտեցումների քննարկումը կարևոր է ոչ միայն հաջողված փորձի տեղայնացման նպատակով, այլ նաև այն փորձի արդյունքում բացահայտված խոչընդոտները հաշվի առնելու և նոր լուծումներ փնտրելու համար:

Ատենախոսության երրորդ՝ «Մասնակցային կառավարման առանձնահատկությունները ԳՂ համայնքներում» գլխում բացահայտվել են համայնքների կառավարման հիմնախնդիրները ԳՂ-ում, ներկայացվել են ԳՂ-ում տեղական ինքնակառավարման զարգացման ուղղությունները, այնուհետև՝ քննարկման առարկա են դարձել մասնակցային կառավարման դրսևորումները ԳՂ համայնքներում, ինչպես նաև օրենսդրանորմատիվային կարգավորման կառուցակարգերը: Աշխատանքի այս բաժնում գնահատվել է նաև ԳՂ օրենսդրությանը համապատասխան տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության աստիճանը՝ նախապես հիմնավորված «մասնակցության սանդղակի» մեթոդաբանությամբ:

Աշխատանքում կատարած հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում շատ համայնքներ փաստացիորեն չեն իրականացնում օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների մեծ մասը, ինչը բացատրվում է առաջին հերթին համայնքների տնտեսական և ֆինանսական իրական ներուժի ոչ բավարար վիճակով և մեծ թվով փոքր ու թույլ կարողություններ ունեցող համայնքների առկայությամբ: Նման իրավիճակում անհնար է դառնում նաև տեղական ինքնակառավարման համակարգի ապակենտրոնացման հետագա խորացումը: Իսկ ապակենտրոնացումն ինքնանպատակ լինել չի կարող. դրա հիմնական արդյունքը պետք է լինի այս կամ այն լիազորության առավել արդյունավետ իրականացումը, որից էլ պետք է օգտվեն համայնքների բնակիչները: Լիազորության իրականացումը հնարավոր է համապատասխան ֆինանսական միջոցների և ռեսուրսների առկայության պայմաններում: Պետության ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելու պայմաններում առաջիկա տարիներին բավական բարդ է լինելու զգալիորեն ավելացնել համայնքներին հատկացվող ֆինանսական միջոցները: Բացի այդ, ֆինանսավորման ավելացումը որպես երկարաժամկետ լուծում դիտարկվել չի կարող, քանի որ անարդյունավետ կառավարման արդյունքում դա կհանգեցնի բյուջետային միջոցների փոշիացման: Հայաստանում գործում է միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգ, ընդ որում՝ բոլոր համայնքները գործում են միևնույն օրենսդրական դաշտում, բացի Երևան քաղաքից: **Տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակի բացակայությունը ամբողջական չի դարձնում համակարգը:** Դետազոտության

արդյունքում նշվում է, որ մեր հանրապետության 915 համայնքներից՝ 440-ը (438 գյուղական և 2 քաղաքային) կամ 48%-ը ունեն 1.000-ից պակաս բնակչություն: Հանրապետության 866 գյուղական համայնքներից 233-ը կամ ընդհանուրի 27%-ը ունեն մինչև 400 բնակիչ, 440-ը կամ ընդհանուրի 51%-ը՝ մինչև 1000 բնակիչ (Աղյուսակ 1): Ըստ բնակչության թվի՝ ամենամեծ գյուղական համայնքը Շիրակի մարզի Ախուրյան համայնքն է (10.046 բնակիչ), ամենափոքրը՝ Սյունիքի մարզի Քաշունի համայնքը (27): Փաստորեն, ամենամեծ գյուղական համայնքը, ամենափոքրից բնակչության թվով մեծ է 372 անգամ: Բոլոր համայնքների համար գործում է միևնույն օրենսդրությունը՝ անկախ չափերից և բնակչության թվից: Այսպես, Գյումրի քաղաքի (մոտ 120.000 բնակչությամբ) և Քաշունիի (27 բնակիչ ունեցող) տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն նույն լիազորություններն ու պարտականությունները: Սա էլ հենց հանգեցնում է դժվարությունների, քանի որ համայնքների մեծ մասը չի կարողանում բնակչությանն անհրաժեշտ ծառայություններ մատուցել:

Աղյուսակ 1. Մարզերի գյուղական համայնքները՝ ըստ բնակչության թվի⁷

Մարզի անվանումը	Մինչև 100 բնակիչ	101-400 բնակիչ	401-1000 բնակիչ	1001-2000 բնակիչ	2001-5000 բնակիչ	5000 բնակից ավել	Ընդամենը
Արագածոտն	3	30	41	21	14	2	111
Արարատ	0	4	15	32	36	6	93
Արմավիր	0	4	7	40	39	4	94
Գեղարքունիք	1	20	23	13	18	12	87
Լոռի	3	37	21	25	16	3	105
Կոտայք	1	5	15	14	18	7	60
Շիրակ	3	32	35	31	13	2	116
Սյունիք	20	44	24	8	6	0	102
Վայոց Ձոր	0	16	9	11	4	1	41
Տավուշ	0	10	17	17	13	0	57
Ընդամենը	31	202	207	212	177	37	866

«Հ-ում իրականացվող տեղական ինքնակառավարման վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի բյուջետային միջոցները չեն բավարարում հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար: Դրանք հիմնականում բավարարում են միայն համայնքի ղեկավարի աշխատակազմը պահպանելու համար, և միջոցների այսպիսի տրոհումը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների: Ուսումնասիրելով համայնքների եկամուտների կառուցվածքը՝ նշվում է, որ սեփական եկամուտների տեսակարար կշիռը դեռևս փոքր է համայնքների ընդհանուր եկամուտների մեջ: Համայնքների ֆինանսական անկախության ցածր մակարդակն արտահայտվում է համայնքների՝ պետական դրամաշնորհներից խիստ կախվածությամբ: ՀՀ համայնքների բյուջեների եկամուտներում սեփական եկամուտների մասնաբաժինը վերջին տարիներին տատանվում է ընդամենը 30%-ի սահմաններում, իսկ ՀՀ պետական բյուջեից ստացվող մուտքերի մասնաբաժինը գերազանցում է 70%-ը:

Ելնելով վերը նշված դատողություններից՝ ըստ հեղինակի ՀՀ տարածքային կառավարման առջև ծառայած խնդիրները լուծելու և առավել արդյունավետ կառավարման համակարգ ապահովելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ձևավորել տեղական ինքնակառավարման երկնակարգակ համակարգ՝ դեռևս անփոփոխ թողնելով ներկայիս գործող համայնքները՝ որպես առաջին մակարդակ, և ստեղծել երկրորդ մակարդակը: Տեղական ինքնակառավարման երկնակարգակ համակարգը կարող է ապահովել որոշակի առավելություններ, մասնավորապես՝ այն միասնական է դարձնում երկրի ընդհանուր տարածքային կառավարման համակարգը՝ հստակեցնելով երկու մակարդակների միջև

⁷Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

լիազորությունների բաշխումը, բացի դրանից՝ տարածքային մակարդակում ավելացված ֆինանսական կարողությունները հնարավորություն կստեղծեն ներգրավելու ավելի որակյալ մարդկային ռեսուրսներ, և մասնագետները կնախընտրեն մնալ իրենց շրջանում: Եվ վերջապես՝ հնարավորություններ կստեղծվեն օգուտներ քաղելու նախկինում փոքր համայնքների կողմից իրականացվող հանրային ծառայությունների ռեգիոնալացման արդյունքում ստեղծված մասշտաբի էֆեկտից: Շրջանային մասշտաբը կխթանի հանրային ծառայություններում ներդրումներն ու կզարգացնի մասնավոր-հանրային համագործակցությունը: Բացառությամբ մեծ երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Միացյալ Թագավորություն, Իսպանիա), որոնք հիմնականում կիրառում են բազմամակարդակ համակարգ, երկմակարդակ տեղական ինքնակառավարում ենթադրող վարչատարածքային բաժանումը հարմար է այն դեպքերում, երբ համայնքները չափազանց թույլ են, որպեսզի իրագործեն իրենց լիազորությունների մեծ մասը և նրանց տարածքային խոշորացումը արդյունավետ լուծում չէ: Այլ կերպ ասած՝ այսօրինակ բաժանումը հատկապես նպաստավոր կարող է լինել Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու համար: Երկրորդ մակարդակի տեղական ինքնակառավարման լիազորություններն ու գործառույթները պետք է ունենան այնպիսի ծավալ, որը հնարավորություն կընձեռի կառավարել առավել խոշոր ինքնակառավարվող միավորը՝ իբրև ամբողջական բարդ կառույց, իսկ համայնքները համապատասխան լիազորություններն ու գործառույթները պետք է հստակ տարանջատեն երկրորդ մակարդակի տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններից և վերաբերեն այն ոլորտներին, որոնք համեմատաբար ինքնուրույն են, ունեն մեծ մասամբ տեղական ուղղվածություն: Այս ընդհանուր տրամաբանության համատեքստում առանձնացվում են այն հիմնական չափանիշները, որոնք աշխատանքում դիտարկվել են ՀՀ-ում երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի կիրառումն առաջարկելիս և լիազորությունները երկու մակարդակի միջև բաշխելիս: Դրանց թվին են դասվել՝ ՏԻՄ-երի արագ արձագանքման կարողությունը և մատուցվող ծառայությունների մատչելիությունը, քաղաքացիների մասնակցությունը կառավարմանը և ՏԻՄ-երի հաշվետվողականությունը, մատուցվող ծառայությունների մասշտաբի էֆեկտը և արտահոսքի հատկությունը: Եվ վերջապես՝ ներկայացված չափանիշները ամփոփվել են մեկ ՀՀ համայնքների բյուջետային ծախսերի ոլորտային կառուցվածի փաստացի ցուցանիշների հաշվարկով, որպեսզի հնարավոր լինի պատկերացնել, թե տեղական ինքնակառավարման մարմինները որքանով պատրաստ կլինեն մատուցելու իրենց մակարդակին ամրագրված լիազորությունները: Մասնավորապես՝ այս տրամաբանությունը ևս հաստատում է հեղինակի այն մոտեցման նպատակահարմարությունը, ըստ որի առաջին մակարդակում գործող գյուղական համայնքների ղեկավարները, լինելով ժողովրդավարական սկզբունքներով ձևավորված և սեփական բյուջեն ունեցող լիարժեք տեղական ինքնակառավարման մարմիններ, այնուամենայնիվ ունենալու են բացառապես տեղական բնույթի և իրենց թույլ կարողություններին համապատասխան սահմանափակ թվով լիազորություններ: Համայնքների բյուջեների ծախսերի ոլորտային կառուցվածքի հաշվարկված ցուցանիշները ներկայացված են ատենախոսության հավելվածների բաժնում: Ներկայացված չափանիշների քննարկումը, ըստ հեղինակի մոտեցման, ևս վկայում է, որ դրանց միաժամանակյա ապահովման լավագույն եղանակը ՀՀ-ում երկմակարդակ տեղական ինքնակառավարման իրականացումն է: Մասնավորապես՝ ստորին մակարդակի գոյությունը կապահովի ՏԻՄ-երի արձագանքման արագությունը, մատուցվող ծառայությունների մատչելիությունը, քաղաքացիների մասնակցությունը կառավարմանը և ՏԻՄ-երի հաշվետվողականությունը, իսկ վերին մակարդակը կոչված կլինի ապահովելու մասշտաբի էֆեկտը և վերացնելու կամ գոնե մեղմելու արտահոսքի բացասական հատկության հետևանքները: Այս նույն չափանիշների ապահովման տրամաբանությամբ նաև բաժանվել են լիազորությունները կառավարման վերին և ստորին մակարդակների միջև և ներկայացվել հավելվածների բաժնում: Նշվում է նաև, որ, բացի այս հստակ չափանիշներից, պետք է նաև որոշել, թե տվյալ ծառայությունը ինչ բնույթ ունի՝ տեղական, թե տարածքային, և ինչքանով է տրամաբանական դրա իրականացման լիազորությունը վերապահել այս կամ այն մակարդակի

կառավարման մարմիններին: *Ամփոփելով աշխատանքում առաջ է քաշվում այն մոտեցումը, որ երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգը լայն հնարավորություններ կարող է ապահովել նաև մասնակցային կառավարման զարգացման համար: Հեղինակի համոզմամբ, մասնակցային կառավարման արդի կառուցակարգերը առավել արդյունավետորեն կարող են կիրառվել տեղական ինքնակառավարման մեկից ավել մակարդակների գոյության պայմաններում: Այս առումով տեղական ինքնակառավարման վերին մակարդակի գոյությունը ենթադրում է առանց ստորին մակարդակի վերացման առավել խոշոր միավորների կազմավորում, ինչի շնորհիվ կբարեփոխվի տեղական ինքնակառավարման համակարգը, և հետևաբար՝ նպաստավոր պայմաններ կստեղծվեն մասնակցային կառավարման զարգացման համար: Տեղական ինքնակառավարման խոշոր միավորներում մասնակցային կառավարման զարգացման հնարավորությունների մասին առավել մանրամասն խոսվել է աշխատանքի 4-րդ գլխում:*

Աշխատանքի նախորդ հատվածների ուսումնասիրության արդյունքները ընդհանրացնելով հեղինակը պնդում է, որ բնակիչների մասնակցության հասկացությունը կարելի է դիտարկել տարբեր հարթություններով. այն կարող է համարվել որպես առանձին տեսական խնդիր, իրավական հասկացություն, բայց միևնույն ժամանակ որպես գործնականում փաստացիորեն կիրառվող գործընթաց: Վերջին դրսևորումը գերակշռաբար տարբերվում է նախորդ երկուսից՝ ներկայացնելով գիտական հետազոտության առանձին խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է տալ իրավական դաշտի և գործնական կիրառության արդյունքների ուսումնասիրության արդյունքում: Այս առումով, հետազոտության նախնական ենթադրությունն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը կարելի է դիտարկել իբրև ձևավորված իրավական հասկացություն, սակայն գործնականում համակարգը բախվում է բնակիչների մասնակցության բավական ցածր մակարդակի հետ՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Այս ամենով հանդերձ, Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության որոշակի սահմանափակ փորձ նկատվել է: Սակայն, աշխատանքում կատարված հետազոտությունները փաստում են, որ, ցավոք, այդ փորձը գերակշռաբար սահմանափակվել է կամ միջազգային կազմակերպությունների գործունեությամբ, կամ տեղական հասարակական կազմակերպությունների, որոնք ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից: *Այլ կերպ՝ ՀՀ համայնքներում մասնակցային կառավարման իրական գործնական քայլերի նախաձեռնող կողմը ոչ թե պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններն են, այլ հասարակական կազմակերպությունները, ինչը, իհարկե, նկատելիորեն սահմանափակում է նախաձեռնությունների փաստացի արդյունքը:* Այդ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, իրենց ամբողջ արդյունավետությամբ հանդերձ, որոշակիորեն կտրված են համայնքների կառավարման մարմինների փաստացի գործունեությունից, և, ըստ էության, չեն ենթադրում վերջիններիս շահագրգիռ ներգրավվածությունը մասնակցային կառավարման զարգացման գործում: Բացի դրանից, նմանօրինակ ծրագրերին համայնքների ղեկավարները հաճախ խիստ թերահավատորեն են մոտենում, իսկ ծրագրի ավարտից հետո պարզապես վերադառնում իրենց բնականոն գործունեությանը՝ առանց իրական մասնակցության նվազագույն տարրի: Թեև ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման առաջին գործնական քայլերը կապված են միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների գործունեության հետ, սակայն միայն այս հարթությամբ մասնակցային կառավարման իրական զարգացումը գրեթե անհնար է: Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ բոլոր երկրների տեղական ինքնակառավարման համակարգերում բնակիչների մասնակցության գործում չափազանց էական է պետության, մասնավորապես՝ կենտրոնական իշխանության դերը: Եվ թեև այս գաղափարը կարող է հակասական համարվել՝ հաշվի առնելով տեղական ինքնակառավարման համակարգի առանձին և ինքնուրույն գործելու փաստը, սակայն տրամաբանությունն այն է, որ

պետական կառավարման մարմինները անհիմնապես պատասխանատու են տվյալ երկրի օրենսդրության ձևավորման համար, որում, անշուշտ, պետք է արտացոլված լինեն նաև տեղական մակարդակում մասնակցային կառավարումը կարգավորող դրույթներ: Վերջիններս կարող են ունենալ ինչպես ուղղորդող և հնարավորություն ընձեռող, այնպես էլ պարտադրական բնույթ: Ընդ որում, հասկանալի է, որ մասնակցային կառավարումը կարգավորող օրենսդրության առկայությունը կարող է դիտարկվել իբրև սուսկ անհրաժեշտ պայման, բայց ոչ մի դեպքում՝ բավարար: Այս առումով, թե՛ պետական մակարդակով ընդունված օրենքները, և թե՛ դրանց հիման վրա տեղական մակարդակով ավագանու որոշմամբ սահմանած կարգերը պետք է հիմնված լինեն բնակիչների և այլ շահառուների պահանջների բացահայտման և մասնակցության իրական հնարավորության ապահովման վրա: Ինչպես նշվում է աշխատանքում, առանց հստակ կանոնների, ընթացակարգերի և քաղաքականության մասնակցային կառավարումը չի կարող արդյունավետորեն գործել: Բայց, ճիշտ է նաև հակառակ պնդումն առ այն, որ առանց մասնակցության իրական խթանների և գործնական քայլերի, օրենքները, կանոնները և ընթացակարգերը անօգուտ են:

Հայաստանի Հանրապետությունում մասնակցային կառավարման իրավական դաշտը գնահատելու համար *հեղինակի կողմից կիրառվել է Շ. Արմշտայնի՝ բնակիչների մասնակցության սանդղակը*⁸, որը, թերևս, մասնակցության աստիճանների գնահատման ամենահայտնի տեսական ընդհանրացումն է: Սակայն, որպեսզի այն առավել հարմարեցված լինի Հայաստանի Հանրապետությունում մասնակցային կառավարման հնարավորությունների և փաստացի վիճակին, *Նախապես կատարվել են որոշակի փոփոխություններ սանդղակում* և միայն հետո կիրառվել իրավական դաշտի գնահատման գործում: Կատարված վերլուծության արդյունքները ամփոփվել են հավելվածների բաժնում ներկայացված աղյուսակի միջոցով: Աղյուսակը մանրամասն նկարագրում է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման գործընթացը կարգավորող իրավական դաշտը՝ դասակարգելով համապատասխան դրույթները նախապես ներկայացված մեթոդաբանության միջոցով: *Ընդհանուր առմամբ, վերլուծության արդյունքները և դրանց ամփոփումը ակնհայտորեն մատնանշում են, որ ոլորտը կարգավորող դրույթները գերակշռաբար կենտրոնացված են ներկայացված սանդղակի 3-րդ՝ «Իրազեկում» աստիճանում և բավական կտրված են մասնակցության բարձր աստիճաններից:* Իհարկե, կախված համապատասխան դրույթների փաստացի կիրառման դրսևորումներից, դրանք կարող են տատանվել մի քանի աստիճաններում, սակայն ակնհայտ է նաև, որ մասնակցության վերին աստիճանը, այն է՝ «բնակիչների ուղղակի ազդեցությունը», գրեթե բացակայում է թե՛ Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես, և թե՛ Երևան քաղաքում մասնավորապես: Մասնակցության ապահովման գործիքների մեջ գերակշռում են հանրային լսումները և քննարկումները, որոնք հաճախ ձևական բնույթ են կրում և չեն նպաստում արդյունավետ մասնակցային կառավարմանը: Հեղինակը պնդում է նաև, որ վերին աստիճանին բնորոշ է բացառապես ընտրությունների և տեղական հանրաքվեի միջոցով բնակիչների ուղղակի կամարտահայտման հնարավորությունը, սակայն, հաշվի առնելով տեղական հանրաքվեների հետ կապված խնդիրները, նշում է, որ այն ևս էական ազդեցություն չի կարող ունենալ ընդհանուր պատկերի վրա:


Ատենախոսության չորրորդ՝ «Մասնակցային կառավարման կատարելագործման ուղղությունները խոշոր համայնքներում» գլխում հիմնավորվել է ներկա պայմաններում մասնակցային կառավարման անհրաժեշտությունը խոշոր համայնքներում, բացահայտվել են Երևանի՝ որպես խոշոր համայնքի կառավարման հիմնախնդիրները, կատարվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բազմագործոնային վերլուծություն, մշակվել է պոտենցիալ մասնակցությունը կանխատեսող տնտեսապափական մոդել և մասնակցային բյուջեառավարման ներդրման նոր հայեցակարգ՝ հիմնված կազմակերպությունների ուղղակի մասնակցության վրա, ինչպես նաև ներկայացվել են խոշոր

⁸ Տե՛ս Arnstein, S. R. 1969. A ladder of citizen participation. *Journal of the American Institute of Planners*, 35(4).

համայնքների կառավարմանը բնակիչների մասնակցության նոր և համակողմանիորեն հիմնավորված կառուցակարգեր: Բացի դրանից, խոշոր համայնքների համար մշակված կառուցակարգերը դիտարկվել են նաև ամբողջ հանրապետության համար՝ երկմակարդակ տեղական ինքնակառավարման գործարկման պայմաններում:

Աշխատանքում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքակենտրոնացման գործընթացն ավանդաբար ընկալվում է իբրև գյուղական շրջաններում տնտեսական հնարավորությունների պակասի արդյունք, և հիմնախնդրի լուծումը հիմնականում կենտրոնանում է համապատասխան վարչատարածքային միավորներում ներդրումների աճի ապահովման շուրջ: Բայցևայնպես, այս ծայրահեղական մոտեցումն այլևս ընդունելի չէ, որովհետև նարդիկ գյուղերից տեղափոխվում են քաղաքներ ոչ միայն տնտեսական հնարավորությունների բացակայության պատճառով, այլև բազմաթիվ հարակից պատճառներով դրոյված: Այս առումով առավել խելամիտ և նպատակային արձագանքը քաղաքակենտրոնացման գործընթացին պետք է լինի ոչ թե դրա կասեցումը, այլ ընձեռնված հնարավորությունների և ձեռքբերված ներուժի օգտագործումը տնտեսական աճ ապահովելու նպատակով: Մասնակցային կառավարման գործընթացը կարող է արմատավորվել, միայն եթե քաղաքապետարանը և քաղաքային այլ շահառուներն ընկալեն և զմահատեն դրա արդյունքում ստացվող օգուտները, հատկապես այն պարագայում, երբ խոշոր քաղաքները ապահովում են պետությունների համախառն ներքին արդյունքների գերակշիռ մասը: Ժամանակակից համաշխարհային միտումների ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ խոշոր քաղաքների կառավարման առաջիկա խնդիրները պայմանավորված են լինելու գերակշռաբար ներկայացված գործընթացների՝ **քաղաքակենտրոնացման, զրքալացման, ապակենտրոնացման, կառավարող-կառավարվող գիտելիքների մակարդակի մերձեցման, ինչպես նաև ժողովրդավարացման** համատեղ ընթացքով, որոնցից յուրաքանչյուրը առանձին, ինչպես նաև նրանց միասնությունը անհրաժեշտաբար պահանջելու են քաղաքի կառավարման գործընթացներին մասնակից դարձնել քաղաքային տնտեսության բոլոր շահառուներին: Խոսելով Երևանի՝ որպես խոշոր քաղաքի առանձնահատկությունների մասին՝ հեղինակը նշում է, որ այն զգալիորեն գերազանցում է հանրապետության մնացած քաղաքներին ինչպես իր բնակչության թվով, այնպես էլ առևտրատնտեսական և սոցիալ-մշակութային նշանակությամբ: Տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ Երևանում է կենտրոնացված ոչ միայն մեր երկրի բնակչությունը, այլև տնտեսական ներուժի զգալի մասը: Մասնավորապես՝ 2013 թվականի պաշտոնական տվյալներով արդյունաբերական արտադրանքի ծավալը Երևանում գրանցվել է 507541.4 մլն դրամ, ինչը կազմել է 33 արդյունաբերական արտադրանքի ծավալի 41%-ը, այսինքն՝ զրեթե կեսը: Միաժամանակ, համեմատության համար կարելի է նկատել, որ Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալի ցուցանիշը կազմել է 10573.4 մլն դրամ, ինչը 48 անգամ զիջում է Երևանի համապատասխան ցուցանիշին (զծապատկեր 1):

Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ մարզերի (մլն. դրամ)⁹



⁹ Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2008-2012» վիճագրական ժողովածու, 33 ԱԿԾ, Երևան 2013թ., էջ 26:

Կապիտալ շինարարության տեսանկյունից Երևանի դիրքերն առավել քան ամուր են: Այստեղ մայրաքաղաքի տեսակարար կշիռը ողջ Հանրապետությունում 2013 թվականի տվյալներով կազմել է շուրջ 58%, և հատկանշական է, որ վերջին տարիներին այդ ցուցանիշը նույնիսկ կրճատվել է՝ պայմանավորված Երևան քաղաքում շինարարության ծավալների անկման հետ. համեմատության համար՝ 2008 թվականին այն կազմում էր 87%¹⁰: Քանակական ցուցանիշներն այս առումով առավել քան խոսուն են. Շիրակի ամբողջ մարզը, որտեղ գտնվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը համարվող Գյումրին, բնակչության թվով զիջում է Երևանին 4.2 անգամ, արդյունաբերական արտադրանքի ծավալով՝ 11 անգամ, կապիտալ շինարարության ծավալով՝ 9.8 անգամ, իսկ մանրածախ առևտրի շրջանառությամբ՝ 34.9 անգամ: Հանրապետության մասշտաբով Երևան քաղաքի վերը ներկայացված հզոր տնտեսական ներուժով հանդերձ՝ հեղինակը փաստում է, որ մայրաքաղաքում տեղական ինքնակառավարման համակարգը թե՛ ֆինանսական, թե՛ լիազորությունների ապակենտրոնացման տեսանկյուններից բավական թույլ է և սահմանափակ: Այս հանգամանքը, անշուշտ, **մարտահրավեր է նաև արդյունավետ մասնակցային կառավարման տեսանկյունից, քանի որ, քաղաքը, ըստ էության, «ինքնակառավարվում է» խիստ սահմանափակ մասով:**

Աշխատանքում կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ, թեև Երևան քաղաքի բյուջեն 2010-2013 թթ. ժամանակահատվածում դրսևորել է կայուն աճի միտումներ՝ ի հաշիվ սեփական եկամուտների և ՀՀ պետական բյուջեից տրամադրվող տրանսֆերտների աճի, սակայն բոլոր 4 տարիների համար պահպանվել է Երևանի բյուջեի եկամուտներում սեփական եկամուտների և ՀՀ պետական բյուջետային աղբյուրներից ստացվող մուտքերի ընդհանուր հարաբերակցությունը՝ մոտ 30/70 սահմաններում: Սեփական եկամուտների այս ցուցանիշը հուշում է, որ Երևան քաղաքը, մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավորից դառնալով համայնք, դեռևս պահպանել է պետական ազդեցության մի գերակշիռ հատված, ինչը որոշակիորեն պակասեցնում է արդյունավետորեն ինքնակառավարվելու Երևանի հնարավորությունը: Երևան քաղաքի բյուջետային մուտքերում զգալի մասնաբաժին ունեն նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը, որոնք ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել են բյուջեի ընդհանուր մուտքերի համապատասխանաբար 19.1%, 20.6%, 13.7% և 14.4% տոկոսը: Ընդ որում, մայրաքաղաքի բյուջեի ծախսային հատվածի կառուցվածքը ևս բացատրվում է գերակշռաբար պետական լիազորությունների իրականացման փաստով: Դրանց հիմնական մասը բաժին է ընկել կրթության ոլորտին (շուրջ 40%)՝ պայմանավորված ՀՀ պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների շրջանակներում այդ ոլորտի ծախսերի ֆինանսավորման համար Երևանի բյուջեին տրամադրված հատկացումների խոշոր մասնաբաժնով¹¹: Ամփոփելով Երևան քաղաքի կառավարման առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներն ու մարտահրավերները՝ նշվում է, որ Երևան քաղաքի կառավարման զարգացման անհրաժեշտ պայմանը գործունե տեղական ինքնակառավարման համակարգի կազմավորումն է: Իշխանության այդ ձևը շատ ավելի մոտ է բնակչությանը: Որքան արդյունավետ է իրականացվում տեղական ինքնակառավարումը, այնքան ավելի օպտիմալ լուծում են ստանում քաղաքացիների խնդիրները: Բազմաթիվ հարցեր, որ օրենսդրորեն վերապահված չեն պետական իշխանությանը, կարող են լուծվել տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Նրանք, ըստ էության, ամբողջացնում են հասարակության մեջ պետաիրավական համակարգի գործունեությունը: Հանրային կյանքի խնդիրների մեծ մասը չեն կարող լուծվել համապետական օրենսդիր կամ գործադիր մարմինների միջոցով. դրանք կարող են կարգավորվել միայն տեղական ինքնակառավարման տիրույթում մասնակցային կառավարման սկզբունքներով:

Ատենախոսության այս հատվածում նշվում է, որ արդյունավետ մասնակցություն ապահովելու համար անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ, թե որ գործոններն են բնակիչ-

¹⁰ Նույն տեղում, էջ 44:

¹¹ Աղբյուրը՝ Երևանի բյուջեի կատարման 2010, 2011, 2012 և 2013թթ. հաշվետվություններ:

ներին մղում ակտիվ մասնակցության, ինչը թույլ կտա թե՛ պետական կառավարման և թե՛ քաղաքի կառավարման մարմիններին զմահատելու մասնակցային կառավարման հնարավորությունները և բարձրացնելու դրա արդյունավետությունը: Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության դրդապատճառների խորացված ուսումնասիրությունը անհրաժեշտ է ոչ միայն մասնակցության երևույթը գնահատելու, այլև կառավարման մարմինների կողմից համապատասխան մոտեցումներ և կառուցակարգեր մշակելու և գործադրելու համար: Կարևոր է նաև հասկանալ, թե ինչ գործոնների և փոփոխականների ազդեցությամբ են մասնակցությունից կտրված բնակիչները դառնում ակտիվ մասնակիցներ: Ելնելով վերոնշյալից՝ Երևան քաղաքի 1004 բնակիչ շրջանում հարցում է անցկացվել՝ բացահայտելու համար քաղաքի կառավարման գործընթացին ակտիվ մասնակցության կողմնակից և դրան դեմ արտահայտված բնակիչների հիմնական բնութագրիչները, նրանց վերաբերմունքը մասնակցության այս կամ այն եղանակի նկատմամբ, ինչպես նաև չմասնակցելու պատճառները: «Ակտիվ մասնակցության» գաղափարը ներկայացվել է իբրև տեղական ինքնակառավարման մարմինների հետ բյուջեի, համայնքի զարգացման ծրագրերի համատեղ քննարկում, ինչպես նաև ազդեցություն կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վրա: ***Առեմախտության շրջանակներում կատարված նախնական հետազոտության արդյունքում արդեն իսկ ձևավորվել էր այն կանխավարկածը, որ փաստացիորեն ակտիվ մասնակցություն ունեցող բնակիչների տեսակարար կշիռը շատ ցածր է լինելու, այդ պատճառով հարցման միջոցով փորձ է արվել պարզելու վերոնշյալ բոլոր հարցերը:*** Որպեսզի հնարավոր լինի պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են, օրինակ, թե որ գործոններն են ազդում մասնակցության որոշման վրա, որքան է այս կամ այն գործոնի ազդեցության չափը, որքանով է հավանական, որ համապատասխան բնութագրիչներով բնակիչը կմասնակցի կառավարմանը, հեղինակն օգտվել է տնտեսաչափության տարբեր գործիքներից: ***Տնտեսաչափական վերլուծությունը ամփոփվել է ռեզրեսիոն մոդելի կառուցմամբ, ինչի միջոցով ստացված արդյունքները հնարավորություն կտան քաղաքի կառավարման մարմիններին թիրախավորելու բնակիչների մասնակցության պոտենցիալ համայնքը և ուղղորդված քաղաքականություն կարելու նրանց փաստացի մասնակից դարձնելու ուղղությամբ:*** Ներկայացվող մոդելի հիմնական խնդիրն է եղել բացատրել քաղաքի կառավարմանը մասնակցելու բնակիչների որոշումը, կամ որ նույնն է՝ պոտենցիալ մասնակցությունը, որը և դիտարկվել է իբրև կախյալ փոփոխական: Պարզ ռեզրեսիոն մոդելը, որը հիմնված է միջինից շեղումների նվազագույն քառակուսիների մեթոդի վրա, չէր կարող կիրառվել, քանի որ կախյալ փոփոխականը թվային չէ և կարող է ընդունել միայն երկու արժեք: Վերլուծության համար ի սկզբանե դիտարկվել է նաև դիստոմ (երկու արժեք ընդունող) կախյալ փոփոխականով գծային հավանականության մոդելը, այն է՝ մասնակցության փոփոխականն ընդունում է 1 կամ 0 արժեքները, սակայն այս դեպքում անկախ փոփոխականները ևս պետք է թվային լինեն: Վերլուծության մեջ ընդգրկված կախյալ և անկախ փոփոխականների որակական բնույթի պատճառով գծային հավանականության մոդելը հեղինակի կողմից ընդունելի չի համարվել: Երևան քաղաքում բնակիչների մասնակցության վերլուծության նպատակով կիրառվել է ***լոգիտ ռեզրեսիոն մոդելը***, որը հնարավորություն է տալիս կեղծ փոփոխականների ստեղծման միջոցով որակական անկախ փոփոխականները փոխարինել թվային ցուցանիշներով: Հստակեցված լոգիտ ռեզրեսիոն մոդելում կիրառված կեղծ փոփոխականների արժեքները ներկայացված են արյունասկ 2-ում: Մասնավորապես՝ դիտարկված են բետա գործակիցները, դրանց համապատասխան ստանդարտ շեղումները, կանխատեսող փոփոխականների վիճակագրական նշանակալիությունը, բետա գործակիցների էքսպոնենցիալ արժեքները, որոնք լոգարիթմական արժեքները վերածում են հավանականությունների, ինչպես նաև այդ էքսպոնենցիալ արժեքների 95% հավանականությամբ գնահատված ստորին և վերին սահմանները (վատահեղիության միջակայք): Տնտեսագիտական մեկնաբանության առումով առավելապես հետաքրքիր են երկրորդ, չորրորդ և հինգերորդ սյունյակները: Չորրորդ սյունակում ընդգրկված տվյալներից պարզ է դառնում, որ հստակեցված մոդելում բոլոր անկախ փոփո-

խականների ազդեցությունները կախյալ փոփոխականի վրա վիճակագրորեն նշանակալի են, քանի որ $\beta_n=0$ հիպոթեզը դրանցից ոչ մեկի համար չի հաստատվում ($P<0.05$):

Աղյուսակ 2. Հստակեցված լոգիտ ռեգրեսիոն մոդելում կիրառված կեղծ փոփոխականների արժեքները


	β	Ս.Շ.	Վիճ. նշան. (P)	Էքսպ(β)	95.0% Վ.Ս. էքսպ(β)-ի համար	
					Ստորին	Վերին
Տարիք	-	-	.000	-	-	-
Տես2	-1.013	.195	.000	.363	.248	.532
Տես3	-1.569	.205	.000	.208	.139	.311
Տես4	-1.204	.248	.000	.300	.185	.488
Կրթություն	-	-	.000	-	-	-
ՄԿ	-.944	.200	.000	.389	.263	.576
ՆԿ	-1.015	.212	.000	.362	.239	.548
Եկամուտ	-	-	.000	-	-	-
ԵՆ2	.707	.227	.002	2.027	1.298	3.165
ԵՆ3	.799	.260	.002	2.223	1.336	3.699
ԵՆ4	1.628	.379	.000	5.095	2.422	10.720
ԵՆ5	.835	.307	.006	2.305	1.264	4.205
Վերաբերմունք իշխ. նկատմամբ	-	-	.000	-	-	-
Ղրվ	2.421	.455	.000	11.258	4.612	27.482
Չզվ	.379	.160	.018	1.461	1.068	1.998
Նախկինում մասնակցություն	1.063	.281	.000	2.894	1.669	5.019
Հատման արժեք	.600	.250	.016	1.822	-	-

Աղյուսակում տեղ գտած տարիքային խմբերի բետա գործակիցների էքսպոնենցիալ արժեքները ցույց են տալիս, որ Երևանի բնակիչներից քաղաքի կառավարմանը ակտիվ մասնակցություն ունենալու համգամանքը կարևորում են հատկապես մինչև 22 տարեկան բնակիչները, քանի որ մնացած բոլոր տարիքային խմբերը բնութագրող կեղծ փոփոխականները ունեն մեկից ցածր էքսպոնենցիալ բետա արժեք՝ համապատասխանաբար 0.363, 0.208 և 0.300: *Սա տրամաբանական բացատրությունն է այն բանի, թե ինչու շատ զարգացած քաղաքներում մասնակցային բյուջետավարման շրջանակներում քաղաքի բյուջեի ծախսերի մի զգալի հատվածի վերաբերյալ որոշման կայացման իրավունքը կառավարման մարմինները վերապահում են տվյալ համայնքի երեխաներին և երիտասարդներին:* «Կրթություն» անկախ փոփոխականի հիման վրա ստեղծված փոփոխականներից բարձրագույն կրթությունը բնորոշող կեղծ փոփոխականը ընդունվել է իբրև համեմատության կատեգորիա: Եվ, ինչպես տեսության վրա հիմնված նախնական ենթադրությունն էր հուշում¹², բարձրագույն կրթություն ունեցող Երևանի բնակիչները ավելի հակված են ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքի կառավարմանը: *Մասնավորապես՝ լոգիտ ռեգրեսիոն վերլուծության արդյունքները վկայում են, որ բարձրագույն կրթություն ունեցող բնակիչները շուրջ 60% ավել հավանականությամբ են կարևորում ակտիվ մասնակցությունը՝ մյուս երկու խմբերի հետ համեմատած, իսկ ավելի կոնկրետ՝ 61.1%՝ միջնակարգ կրթություն ունեցող բնակիչների համեմատ, և 63.8%՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների:* Բավական արժեքավոր արդյունքներ է ապահովում պոտենցիալ մասնակցության՝ ըստ եկամուտների խմբերի վերլուծությունը: *Եկամտային խմբերի տեսանկյունից կառավարմանը մասնակցելու ամենամեծ պոտենցիալը առկա է միջին եկամուտ ունեցող բնակիչների շրջանում:* Նշյալ կապը պատկերվել է նաև գրաֆիկորեն՝ ուղղահայաց առանցքի վրա տեղադրելով հաշվարկված էքսպոնենցիալ բետա

¹² Verba, S., K.L. Schlozman, and H. Brady. 1995. Voice and Equality: Civic Voluntarism in American Politics. Harvard University Press, Cambridge, MA.

արժեքները և նշանակելով այն որպես «պոտենցիալ մասնակցություն», իսկ հորիզոնական առանցքի վրա՝ միջինացված եկամտային խմբերը: Գծապատկեր 2-ից ակնհայտորեն երևում է, որ բնակիչների պոտենցիալ մասնակցությունը աճում է՝ եկամուտների աճին զուգընթաց, սակայն սկսած եկամուտների որոշակի մակարդակից (միջինացված՝ 600 հազար ՀՀ դրամ) պոտենցիալ մասնակցության մակարդակը անկում է ապրում:

Գծապատկեր 2. Տեղական ինքնակառավարմանը ակտիվ մասնակցություն ունենալու բնակիչների ձգտումը՝ կախված եկամուտների մակարդակից



Եկամուտների մակարդակի և պոտենցիալ մասնակցության միջև այս տեսակ կապի բացահայտումը, հեղինակի կարծիքով, օգտակար կարող է լինել ոչ միայն Երևան քաղաքի կառավարմանը բնակիչների ակտիվ մասնակցությունը ապահովելու գործում, այլև, առհասարակ, տնտեսության հանրային կառավարման բնագավառում թե՛ տեսության զարգացման, թե՛ կառավարման արդյունավետության բարձրացման առումով: Եթե տվյալ քաղաքում կամ երկրում գերակշռում է միջին եկամուտներ ունեցող բնակիչների հատվածը, ապա այդ դեպքում ավելի մեծ հաջողությամբ կարելի է ձևավորել ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող և ակտիվ մասնակցության ձգտող քաղաքացիական հասարակություն: Ոչ ցածր եկամուտներ, և ոչ նույնիսկ բարձր եկամուտներ ունեցող բնակիչները չեն ձգտում մասնակցելու կառավարմանը այնպես, ինչպես միջին եկամուտներ ունեցողները (միջին խավը): Իսկ ինչպես արդեն մշվել է, տեղական ինքնակառավարման համակարգում արդյունավետ կառավարումը ենթադրում է բնակիչների և համայնքային տնտեսության այլ շահառուների ներգրավման և մասնակցության վրա խարսխված կառուցակարգերի մշակում և զարգացում:

Վերլուծության արդյունքում ստացված արժեքները փաստում են նաև, որ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության գործընթացը չափազանց մեծ չափով պայմանավորված է քաղաքական գործոններով, ինչը, ըստ էության, խոչընդոտում է արդյունավետ մասնակցությանը, իսկ բնակչության այն հատվածը, որը պատրաստակամություն է հայտնում ակտիվ մասնակցություն ունենալու, գերակշռաբար քաղաքի կառավարման մարմինների կամքը արտահայտող հատվածն է ներկայացնում: Այս հանգամանքը ոչ միայն խոչընդոտում է արդյունավետ մասնակցային կառավարման իրականացմանը, այլ նաև հուշում, որ բնակիչների մասնակցության կառուցակարգերը պետք է վերափոխվեն և կատարելագործվեն:

Տրամաբանական է ենթադրել, որ հարցված բնակիչների այն մասը, որ նախկինում որևէ տեսակի մասնակցություն է ցուցաբերել քաղաքի կամ վարչական շրջանի կառավարման գործընթացներին (հանրային լսում, մասնակցություն ավագանու նիստին և այլն), բնակիչների մյուս հատվածի համեմատ առավել մեծ ձգտում պետք է ունենա հետագայում մասնակցություն ունենալու, քանի որ փաստացիորեն ներկայացնում է «ակտիվ համայնքը»: Այս կանխավարկածը ևս հաստատվել է լոգիտ ռեգրեսիոն վերլուծության շնորհիվ, սակայն համապատասխան բետա գործակցի էքսպոնենցիալ արժեքը ստացվել է ընդամենը 2.894: *Վերջին կետը փոփոխականի այսպիսի ցածր էքսպոնենցիալ բետա արժեքը, ամփոփ, վկայում է այն մասին, որ մասնակցության առկա ձևերը արդյունավետ չեն, և բնակիչների*

մի ստվար զանգված հրաժարվում է հետագայում մասնակցության գաղափարից՝ մի շարք պատճառներով դժգոհ լինելով մասնակցության նախորդ փորձի արդյունքներից:

Երևանի 1004 բնակչի շրջանում անցկացրած հարցման նպատակներից մեկն է եղել պարզել բնակիչների չմասնակցելու հիմնական պատճառները: Եթե չդիտարկվեն կառավարմանը մասնակցություն չունենալու բնակիչների այն օբյեկտիվ պատճառները, որոնք կապված չեն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հետ (ժամանակի պակաս, հետաքրքրված չլինել), ապա ակնհայտորեն առանձնանում են երկու կարևորագույն խոչընդոտ, որոնց հաղթահարումը պետք է դրված լինի մասնակցային կառավարման համակարգի զարգացման հիմքում: **Դրանք են՝ հրազենվածության ցածր աստիճանը և մասնակցության արդյունքների նկատմամբ թերահավատությունը:** Բացի այն փաստից, որ երևանի հարցված բնակիչների ընդամենը 14%-ն է վերջին հինգ տարվա ընթացքում որևէ եղանակով մասնակցել սեփական համայնքի կառավարմանը (ընտրությունները հաշվի չառած), մասնակցության եղանակները, ըստ հեղինակի, ևս գոհացուցիչ համարվել չեն կարող, որովհետև մասնակցած բնակիչների մեծ մասը հիասթափվում են գործընթացի արդյունքներից և սկսում են չկարևորել այն: Երևանի բնակիչների փաստացի մասնակցության խնդիրները հաստատվում են նաև հանրային զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի քննարկման արդյունքների վերաբերյալ քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվությամբ: **Չանդային բաց լսումներն անցել են բացառապես ավագանու անդամների, քաղաքապետարանի աշխատակիցների և համապատասխան խորհրդակցական մարմնի անդամների մասնակցությամբ:** Աշխատանքում նշվում է նաև, որ թեև բնակիչների ուղղակի մասնակցության կարևորագույն միջոցներից է տեղական հանրաքվեի անցկացումը, սակայն, օրենքը պարունակում է մի շարք սահմանափակումներ (համայնքի բյուջե, համայնքի սեփականության օտարում և այլն), որոնք էականորեն նվազեցնում են տեղական հանրաքվեի իրական նշանակությունը տեղական խնդիրների լուծման գործում: Բացի դրանից, մեր երկրի օրենսդրությամբ տեղական հանրաքվեի արդյունքները պարտադիր բնույթ չեն կրում: Այս ամենի հետևանքով, օրենսդրության ընձեռած հնարավորությամբ հանդերձ, ԳՀ-ում դեռևս տեղական հանրաքվեի անցկացման դեպք չի եղել: Բացի որ բնակիչների մասնակցության առաջնային խոչընդոտներից մեկն է, որ բնակիչները շոշափելի արդյունքներ չեն ակնկալում իրենց մասնակցությունից, ապա մասնակցային կառավարման զարգացման հիմքում, ըստ հեղինակի, պետք է դրված լինի բնակիչների ազդեցության լծակների ամրապնդումը, որպեսզի մասնակցության արդյունքները լինեն հստակ և շոշափելի: **Այս առումով, հեղինակն անհրաժեշտ է համարում տեղական հանրաքվեի սահմանակարգի բարեփոխումը, ինչ արդյունքում նախ՝ վերջինիս զուտ խորհրդատվական դերը պետք է լրացվի պարտադիր կատարման տարրերով, և հետո՝ պետք է վերանայվեն այն խիստ սահմանափակումները, որոնք դրված են ԳՀ-ում տեղական հանրաքվեների անցկացման հիմքում:** Միայն այն հանգամանքը, որ օրենքի ընդունումից հետո մինչ այժմ ԳՀ-ում տեղական հանրաքվեի անցկացման որևէ նախադեպ չի եղել, արդեն փաստում է, որ ներկա օրենսդրական լուծումներով տեղական հանրաքվեի սահմանակարգը մեր երկրում որևէ դեր չունի:

Այնուհետև՝ մանրամասն վերլուծելով բնակիչների մասնակցության, ինչպես նաև խորհրդակցական խորհուրդների գործունեության խնդիրները հեղինակը հիմնավորում վարչական շրջանների մակարդակով խորհրդակցական խորհուրդների վերափոխուման անհրաժեշտությունը **մասնակցային խորհուրդների:** Այս պարագայում խորհուրդները կապահովեն բնակիչների առավել լայն զանգվածի ընդգրկվածությունը, բացի դրանից, ազդեցության ֆինանսական լծակի շնորհիվ կչեզոքացվի հետազոտության ընթացքում նախապես բացառապես մասնակցության կարևորագույն խոչընդոտներից մեկը, այն է՝ մասնակցության արդյունքների նկատմամբ բնակիչների թերահավատությունը: Երևանի կառավարման երկմակարդակ կառուցվածքի պայմաններում, ատենախոսի մոտեցմամբ, մասնակցային խորհուրդները պետք է ձևավորվեն հենց վարչական շրջանի մակարդակում, քանի որ սրանք քաղաքի կառավարման ստորին հարթությունն են և ուղակիորեն առընչ-

վում են տեղական նշանակության առօրյա խնդիրներին: Սա նաև այն հարթությունն է, որի դեպքում յուրաքանչյուր բնակիչ կարող է դիտարկվել իբրև «փորձագետ», քանի որ վարչական շրջանների կողմից մատուցվող ծառայությունները անմիջապես կապված են բնակիչների կենցաղի հետ: Այլ կերպ ասած՝ արդարացված է այն մոտեցումը, երբ բնակիչներին հնարավորություն է տրվում ուղղակիորեն որոշելու, թե ինչ կենցաղ են իրենք նախընտրում:

Ատենախոսի կարծիքով պետք է սահմանվի որոշակի հստակ տոկոսադրույք տվյալ վարչական շրջանի մասով նախորդ տարվա հատկացումների չափից, որի շրջանակներում մասնակցային խորհուրդները կարող են կազմել վարչական շրջանի մասնակցային բյուջեն հաջորդ տարվա համար: Մասնակցային բյուջեով նախատեսված ծախսերը պետք է պարտադիր ներառվեն վարչական շրջանի մասով երևանի բյուջեի ծախսերի մեջ: Որպես հիմք ընդունելով նախապես անցկացրած հարցումները, դրանց միջոցով աշխատանքում կատարված տնտեսաչափական վերլուծությունները, ինչպես նաև ուսումնասիրելով ամբողջ աշխարհում շուրջ 1000 մեծ և փոքր տեղական ինքնակառավարման միավորների փորձը՝ հեղինակը պնդում է, որ բնակիչների մեծ մասը կարող է ակտիվորեն մասնակցել համայնքի կառավարմանը, եթե իրենց համայնքի (երևանի դեպքում՝ նաև վարչական շրջանի) բյուջեի ծախսային ուղղությունների առնվազն **5%-ը** ուղղակիորեն որոշելու հնարավորություն ունենա: Սա այն նվազագույն շեմն է, որը կարող է սահմանվել մասնակցային բյուջետավարման համակարգի ներդրման մեկնարկային տարիներին, սակայն հետագայում մասնակցային խորհուրդների աշխատանքի արհեստավարժության և փորձառության աճին զուգընթաց, տոկոսադրույքը կարող է վերանայվել և երկարաժամկետ հեռանկարում հասնել մինչև քաղաքի բյուջեի 20%-ին: Մասնակցային խորհուրդները իրենց հայեցողությամբ և նախաձեռնությամբ շատ դեպքերում կարող են որոշում կայացնել նաև բնակիչների քվեարկության հիման վրա, եթե համարեն, որ տվյալ նախագիծը բնակիչների առավել լայն զանգվածի ընդգրկվածություն է պահանջում:

Հաշվարկված մասնակցային բյուջեները մանրամասն ներկայացվել են աշխատանքի հավելվածների բաժնում: *Այս կառուցակարգի գործարկման պարագայում չի բացառվի նաև, որ մասնակցային խորհուրդը որոշի իր ամբողջ բյուջեն ուղղել մեկ խոշոր նախագծի իրականացմանը: Դեռ ավելին՝ տարբեր վարչական շրջանների մասնակցային խորհուրդներ կարող են համագործակցել և համատեղ բյուջեով ներկայացնել միջհամայնքային կամ համաքաղաքային նշանակության առավել խոշոր նախագծեր: Ատենախոսի համոզմամբ՝ ուղղակի ազդեցություն ունենալու այսպիսի ֆինանսական լծակը իրական քայլ կարող է լինել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովման գործում, քանի որ բնակիչների համար մասնակցության արդյունքները այս պարագայում կլինեն առավել շոշափելի և ընկալելի: Բացի դրանից, ներկայացված կառուցակարգով վարչական շրջանների համար մասնակցային բյուջեների մշակումը լրացուցիչ հնարավորություն կընձեռի տեղական ինքնակառավարման մարմիններին կենտրոնանալու համայնքի այն խնդիրների վրա, որոնք անմիջապես բարձրացվել են բնակիչների կողմից՝ մասնակցային մարմնի միջոցով:*

Քննարկելով տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության նոր կառուցակարգերի ներդրման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը՝ հնարավոր է դառնում փաստել, որ *կառավարման այսպիսի խոշոր միավորները մի կողմից՝ առավել բարդացնում են բնակիչների անմիջական մասնակցության հարցը, սակայն մյուս կողմից՝ լրացուցիչ հնարավորություններ են ապահովում՝ օգտագործելու քաղաքի կուտակված հսկայական ներուժը:* Այս առումով, հեղինակը նշում է, որ աշխատանքում առաջարկած երկնակարգակ տեղական ինքնակառավարման համակարգի պայմաններում (խոշորացված միավորները՝ որպես վերին մակարդակ) հնարավոր կլինի կիրառել մասնակցային բյուջետավարման ներկայացված կառուցակարգը ամբողջ հանրապետությունում, որի դեպքում վարչական շրջանների գործառույթը կիրականացնեն ստորին մակարդակի տեղական ինքնակառավարման մարմինները: Առհասարակ, բնակիչների մասնակցության իրավունքը ժամանակակից պայմաններում կարելի է դիտարկել իբրև ժողովրդավարության

և *տնտեսական զարգացման* կարևորագույն գործոններից մեկը¹³: Կերչինս, լինելով ավելի տարողունակ երևույթ, քան տնտեսական աճը, կարող է ապահովվել միայն ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման պարագայում, ինչը, իր հերթին, ենթադրում է հանրային կառավարման տարբեր մակարդակներում բնակիչների մասնակցության գործունե կառուցակարգերի մշակում և ներդրում: *Ատենախոսի համոզմամբ՝ այս նպատակներին հասնելու լավագույն մոտեցումը ժողովրդավարական կառավարման համակարգի վարից վեր զարգացումն է՝ սկսելով տեղական մակարդակից:* Սա կարող է հիմնավորվել այն հանգամանքով, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը անմիջապես առնչվում է բնակիչների կենցաղին, կենսագործունեությանը և նրանց առօրյա խնդիրներին: Բացի դրանից, պետական կառավարման հիմնախնդիրների համեմատ՝ տեղական նշանակության խնդիրները ավելի մեծ հաջողությամբ կարող են լուծվել բնակիչների մասնակցությամբ: *Այս առումով, տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառուցվածքի արմատավորումը կարող է դիտվել ոչ միայն որպես տեղական ինքնակառավարման զարգացման ուղի, այլ նաև որպես մեկնակետ՝ վարից վեր սկզբունքով հանրային կառավարման ամբողջ համակարգը բարեփոխելու համար:*

Ատենախոսության մեջ ներկայացվում է մի մոտեցում, որ ԳՅ-ում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնական խոչընդոտներից մեկն այն է, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեությամբ, ինչպես նաև եկամուտների աղբյուրների կառուցվածքով կտրված են համայնքում ծավալվող տնտեսական գործունեությունից: Սակայն, Երևանի տնտեսության նկատմամբ նման վերաբերմունքը ոչ միայն անընդունելի է արդյունավետ տեղական ինքնակառավարման իրականացման տեսանկյունից, այլև, հաշվի առնելով Երևանի դերը ԳՅ տնտեսությունում¹⁴, բացասական հետևանքներ կարող է ունենալ ամբողջ երկրի մասշտաբով: *Սա է պատճառը, որ աշխատանքում կարևորվում է կազմակերպությունների՝ որպես շահառուների առանձին խմբի մասնակցությունը Երևան քաղաքի կառավարմանը, որի դրսևորումները հետագայում կարող են նախադեպ հանդիսանալ ԳՅ ամբողջ տեղական ինքնակառավարման համակարգի համար:* Սակայն, հանրային կառավարման հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ գործարարության զարգացումը մշտապես եղել է պետական կառավարման մարմինների գործառույթը, բավական ցածր է ապակենտրոնացման մակարդակը համայնքի գործարարության զարգացման բնագավառում, մասնավոր հատվածի և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները հասցվել են նվազագույնի, և հետևաբար՝ երկու կողմերի համար էլ բացակայում են այն խթանները, որոնց միջոցով հնարավոր կլինեի ապահովել կազմակերպությունների մասնակցությունը քաղաքի կառավարմանը: Միաժամանակ, համաշխարհային փորձը վկայում է, որ հատկապես փոքր և միջին գործարարության զարգացումը ոչ միայն պետական կառավարման մարմինների գործառույթն է, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների, որոնք հաճախ առավել լավ են տիրապետում տեղական գործարարության պահանջներին, խնդիրներին և զարգացման հնարավորություններին: Իսկ խոշոր քաղաքների պարագայում (եվրոպական շատ մայրաքաղաքներ), տեղական գործարարության զարգացումը համարվում է քաղաքի կառավարման մարմինների կարևորագույն խնդիրներից մեկը: Միևնույն ժամանակ, ինչպես ներկայացվել է, *Երևանում կենտրոնացված է երկրի տնտեսական ներուժի գերակշիռ մասը, ինչը մի կողմից՝ լրացուցիչ բեռ է քաղաքի կառավարման համար, մյուս կողմից՝ հնարավորությունների մեծ դաշտ՝ օգտագործելու այդ ներուժի ի օգուտ քաղաքի զարգացման:* Այս առումով, ատենախոսը նշում է, որ Երևան քաղաքում կենտրոնացված կազմակերպությունները կարող են էականորեն նպաստել մայրաքաղաքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Ատենախոսության շրջանակներում իրականացված նախնական հետազոտությունների արդյունքում փորձ է արվել բացահայտել, թե քաղաքի կառավարման մարմինները որ դեպքում և ինչ պայմաններում պատրաստ կլինեն մասնա-

¹³ Այս մոտեցմանն է հարում նաև տնտեսագիտության ոլորտում նրբեյան մրցանակակիր Ամարտիա Սենը: Առավել մանրամասն տե՛ս Sen, A. 1999. Development as Freedom, New York: Knopf, p.291:

¹⁴ Մանրամասն տե՛ս աշխատանքի 4.2 ենթաբաժնում:

կից դարձնելու կազմակերպություններին որոշումների ընդունման գործընթացին, ինչպես նաև, թե երևանում գործող տարբեր կազմակերպություններ որքանով են պատրաստ ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքի կառավարման գործընթացին: Քաղաքի կառավարման մարմինների մոտեցումը այս հարցին միասնական է¹⁵: թե՛ քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչակազմի և թե՛ ավագանու անդամների գերակշռի մասը առանձնացնում է երկու հիմնական պատճառ, թե ինչու գործարարության ոլորտը չպետք է ներկա պայմաններում մասնակցություն ունենա որոշումների ընդունման գործընթացին: Առաջինն այն է, որ քաղաքապետը գործարարության աջակցության և զարգացման բնագավառում գրեթե լիազորություն չունի: Եվ երկրորդ՝ գործարարության զարգացումը անմիջապես կապված չէ քաղաքի բյուջեի եկամուտների հետ: Եվ այս առումով, մասնավոր հատվածը, կառավարչական որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու դեպքում, կարող է առաջ մղել սեփական շահերը, ինչը, ֆինանսական մուտքերի բացակայության պարագայում, անընդունելի է:

Միաժամանակ, երևան քաղաքում գործունեություն ծավալող կազմակերպությունների շրջանում փորձագիտական հարցում է անցկացվել՝ պարզելու համար, թե որքան են վերջիններս կարևորում քաղաքի կառավարմանն առնչվող որոշումներին մասնակցություն ունենալու երևույթը: Հարցման ընտրամբում ընդգրկվել են 132 առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում խոշոր, միջին և փոքր: Հարցմանը մասնակցել են երևան քաղաքում գործունեություն ծավալող գործարարներ, գործադիր տնօրեններ և կազմակերպությունների ղեկավար կազմի աշխատողներ: Թեև երևանում գործող կազմակերպությունների գերակշռի մեծամասնությունը պատրաստ է ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքի կառավարմանն առնչվող որոշումների ընդունման գործընթացին, տեղական ինքնակառավարման մարմինները պատրաստ չեն վերջիններիս մասնակից դարձնելու, քանի որ այդ կազմակերպությունների գործունեությունը ֆինանսական առումով կապված չէ երևանի բյուջեի եկամտային մուտքերի հետ: Դեռ ավելին՝ երևանի բյուջեի եկամուտներում սեփական եկամուտների մասնաբաժինը վերջին տարիներին տատանվում է ընդամենը 30%-ի սահմաններում, իսկ ՀՀ պետական բյուջեից ստացվող մուտքերի մասնաբաժինը գերազանցում է 70%-ը: **Հաշվի առնելով երկրի տնտեսությունում մայրաքաղաք երևանի հսկայական մասնաբաժինը, ինչպես նաև դրա միջոցով սեփական եկամուտներ ապահովելու զգալի ներուժը՝ հեղինակը պնդում է, որ վերանայման կարիք ունի քաղաքի ֆինանսական կառավարման մոդելը, ինչը պետք է ենթադրի սեփական եկամուտների մասնաբաժնի ավելացում՝ ի հաշիվ երևանում գործող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերից կատարվող մասհանումների: Սա պետք է խրախուսի նաև քաղաքի կառավարման մարմիններին, որ վերջիններս շահագրգռված լինեն ինչպես գործարարության զարգացմամբ, այնպես էլ կառավարմանը կազմակերպությունների մասնակցությունը ապահովելու գործում:** Երևան քաղաքի կառավարմանը կազմակերպությունների մասնակցության ապահովման քաղաքականությունը և աշխատանքում քննարկվել են երևանի բյուջեի սեփական եկամուտների ավելացման հնարավորությունը՝ ի հաշիվ կազմակերպությունների կողմից վճարվող հարկատեսակների: **Գեղինակի համոզմամբ երևան քաղաքի բյուջեի եկամուտները պետք է կապված լինեն քաղաքի տնտեսական ակտիվության հետ, մասնավորապես՝ դրանք պետք է ավելանան քաղաքի տնտեսության աճին զուգընթաց և՛ հակառակը:** Այս կապի գոյության պայմաններում կավելանա տեղական իշխանությունների շահագրգռվածությունը՝ իրենց լիազորությունների շրջանակներում արդյունավետորեն կառավարելու քաղաքի տնտեսությունը և հետևաբար՝ ավելացնելու քաղաքի եկամուտները:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ երևանի բյուջեին և առհասարակ, համայնքների բյուջեներին ԱԱԳ-ից և շահութահարկից մասհանումներ կատարելը առաջացնում է որոշակի խնդիրներ: Մի սկզբունքի դեպքում («ծագման վայրի») հիմնական

¹⁵ Տեղեկատվությունը ստացվել է դիտարկման մեթոդով՝ քաղաքապետարանի, վարչական շրջանների վարչակազմերի, ինչպես նաև ավագանու անդամների հետ անանուն հարցազրույցների արդյունքում:


հարկային բեռը կրող սպառողների համայնքի բյուջեն կարող է անմասն մնալ հարկային եկամուտներից: Այսպես, հաշվի առնելով տնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ սպառման շուկան, Երևանը կարող է զրկվել այն եկամուտներից, որոնք որ ձևավորվել են Երևանի բնակիչների հարկերի հաշվին: Իսկ մյուս սկզբունքի դեպքում («Շահանակման վայրի») վերոնշյալ պատճառներով բավական խնդրահարույց են դառնում հարկային բազայի ճշգրիտ հաշվարկումը և արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը: **Սակայն, միևնույն ժամանակ հեղինակի կարծիքով այս դժվարությունների հաղթահարումը պետք է զտնվի ուշադրության կենտրոնում և համապատասխան կառուցակարգի մշակման պարագայում երկարաժամկետ հեռանկարում շահութահարկից մասհանումները ևս կարող են համալրել Երևանի բյուջեի եկամտային մասը:** Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ աշխատանքում նշվում է, որ Երևանի բյուջեի և քաղաքում գործող կազմակերպությունների եկամուտների միջև կապի ապահովման համար առավել նպատակահարմար է մասհանումներ կատարել կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարվող **եկամտային հարկից:** Վերջինս տարածքային բաշխման առումով ամենակայուն հարկային բազա ունեցող հարկատեսակն է, որը կարող է թույլ տալ քաղաքի կառավարման մարմիններին առավել արդյունավետորեն և արդարացիորեն ֆինանսավորելու համայնքային ծառայությունների մատուցումը: Բացի ներկայացված հիմնավորումից, միջազգային փորձը ևս հաստատում է այս հարկատեսակից մասհանումների կատարման նպատակահարմարությունը: **Եկամտային հարկի մի մասը՝ որպես տեղական բյուջեի աղբյուր ամրագրելը հատկապես կարևոր է տեղական ինքնակառավարման խոշոր միավորների համար:** Օրինակ, Երևանի կառավարման մարմինները լիազորություններ են իրականացնում քաղաքային տրանսպորտի, կրթության, առողջապահության և այլ բնագավառներում, որոնց հետ կապված ծախսային կարիքները շատ ավելի մեծ են, քան հանրապետության այլ համայնքների դեպքում: Բացի դրանից, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խոշոր քաղաքի կառավարման մարմինները որոշակիորեն պատասխանատու են նաև բնակիչների սոցիալական պաշտպանության համար, եկամտային հարկի կիրառումը առավել հիմնավորված է, քան նույնիսկ գույքահարկը կամ հողի հարկը, քանի որ այն սերտորեն կապված է հարկ վճարողի վճարումակության հետ: Եվ վերջապես՝ հեղինակն ընգծում է, որ եկամտային հարկից մասհանումների իրականացումը հատկապես արդարացված է ինքնակառավարվող խոշոր միավորների պարագայում, քանի որ, ի տարբերություն փոքր համայնքների, հարկ վճարողների շարժունությունը հարկային իրավասության տարբեր տարածքների միջև անհամեմատ ցածր է: Այլ կերպ ասած՝ Երևան քաղաքում աշխատողների մեծ մասը տվյալ պահին բնակվում է Երևանում: Սա նշանակում է, որ համապատասխան կազմակերպությունների միջոցով վճարվող եկամտային հարկից Երևանի բյուջե կատարվող մասհանումները արդարացված կարող են լինել ինչպես աշխատանքի վայրի առումով, այնպես էլ՝ բնակության: **Եկամտային հարկից մասհանումների իրականացման դեպքում, ատենախոսի մոտեցմամբ, Երևան քաղաքը պետք է աստիճանաբար ազատվի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, ինչը որևէ կերպ չի առնչվում քաղաքի տնտեսական զարգացմանը և պետության կողմից հատկացվում է իբրև անհատույց և ոչ նպատակային ֆինանսական դրամաշնորհ:** Բացի դրանից, ատենախոսության մեջ նշվում է, որ **շատ կարևոր է, որ այդ մասհանումների տոկոսադրույքները հստակորեն սահմանվեն օրենքով: Սա անհրաժեշտ է այն բանի համար, որ տեղական ինքնակառավարման մարմինները ինարավորություն ունենան իրականացնելու սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորում և նախօրոք տեղյակ լինեն, թե մոտավորապես ինչ եկամուտներ են ունենալու: Նախատեսվող ծախսային ծրագրերն իրականացնելու համար:** Իսկ եթե այդ տոկոսադրույքների չափերը շարունակվեն սահմանվել ամեն տարվա պետական բյուջեի մասին օրենքով, ապա դա բացասաբար կանդրադառնա հատկապես քաղաքի զարգացման հեռանկարային պլանավորման վրա անորոշության աստիճանի բարձրացման տեսանկյունից:

Հետևելով եկամտային հարկից մասհանումների իրականացման հիմնավորված նպատակահարմարությանը՝ **հաշվարկի միջոցով պարզվել է, թե ինչպիսի ֆինանսական**

հոսքեր են ակնկալվում այս կառուցակարգի կիրառման արդյունքում: Քանի որ ո՛չ Ազգային վիճակագրական ծառայությունը, ո՛չ Ֆինանսների նախարարությունը չեն հաշվարկում և չեն տրամադրում տվյալներ Երևան քաղաքում գործող կազմակերպությունները ստացված եկամտային հարկի վերաբերյալ, այդ գումարների մեծությունը պատկերացնելու համար կատարվել է համապատասխան հաշվարկ, ինչի արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքում գործող կազմակերպությունների միջոցով վճարված եկամտային հարկի մոտավոր մեծությունը **(եկամտային հարկ (Երևան) = 251,068,100 հազար * 47.4% = 119,006,279.4 հազար):** Ինչ վերաբերում է եկամտային հարկից Երևանի բյուջե կատարվող մասհանումների դրույքաչափին, ապա դրա որոշման հիմքում դրվել են որոշակի սկզբունքներ: Միաժամանակ նշվում է, որ Երևանի բյուջեին եկամտային հարկից մասհանման առաջարկվող սկզբնական «թիրախային» տոկոսադրույքը կարող է հետագայում վերանայվել և ավելանալ լիազորությունների հետագա ապակենտրոնացման պարագայում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են կրթությունը, տրանսպորտը, սոցիալական պաշտպանությունը և այլն: Սակայն, առաջարկվող տարբերակում մասհանումների տոկոսադրույքները պետք է սահմանվեն օրենքով, այլ ո՛չ ամեն տարվա պետական բյուջեի մասին օրենքով, որպեսզի կառավարման մարմինները հնարավորություն ունենան միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական պլանավորում իրականացնելու: Դետալար՝ նպատակահարմար է, որ ապակենտրոնացման շարունակական իրականացմանը զուգընթաց մասհանման տոկոսադրույքի վերանայումը իրականացվի միայն չորս տարին մեկ՝ ԶԳ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման և զարգացման քառամյա ծրագրերի ժամկետներին համապատասխան: Այս դրույթը, հեղինակի համոզմամբ, ևս պետք է ամրագրվի օրենքով: Վերը նշված սկզբունքներին համապատասխան, եթե օրենքով եկամտային հարկից Երևանի բյուջե կատարվող մասհանումների սկզբնական թիրախային դրույքաչափը սահմանվի **10%**, ապա կստացվի **11,900,627.9** հազար ԶԳ դրամ եկամուտ, որը կարող է փոխարինել արդեն ներկայացված **9,774,202.2** հազար ԶԳ դրամ ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիային: Այսպիսով, Երևանի տարածքում գանձվող եկամտային հարկից մասհանումների միջոցով հնարավոր է դառնում մի կողմից տնտեսել ֆինանսական համահարթեցման սկզբունքով Երևան քաղաքին տրամադրվող դոտացիայի գումարը, մյուս կողմից՝ ապահովել մայրաքաղաքի կառավարմանը կազմակերպությունների մասնակցության ֆինանսական հենքը: Այս առումով, առաջարկվում է Երևանի բյուջեի մուտքերի մի մասը ապահովող կազմակերպությունների մասնակցության նոր կառուցակարգ: **Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան կազմակերպությունները իրենց գործունեությամբ նպաստում են Երևան քաղաքի բյուջեի ֆինանսական մուտքերի ավելացմանը՝ Երևանում կարող է կիրառվել մասնակցային բյուջետավարման կառուցակարգը, որի դեպքում Երևանում տնտեսական գործունեություն ծավալող կազմակերպությունները հնարավորություն կունենան որոշակի սահմաններում ուղղակիորեն որոշելու Երևան համայնքի բյուջեի ծախսերի ուղղությունները:** Ինչպես արդեն հաշվարկների միջոցով պարզվել է, Երևանի տարածքում գանձվող եկամտային հարկից մասհանումների արդյունքում 2013թ.-ի տվյալներով Երևանի բյուջեի շուրջ 65 մլրդ ԶԳ դրամ եկամտային մուտքերից 11.9 մլրդ ԶԳ դրամը կարող է ապահովվել ի հաշիվ այդ մասհանումների, այսինքն՝ ամբողջի 18.3%-ը: Մասնակցային կառավարման քննարկված անհրաժեշտությունը և իրականացման տրամաբանությունը ենթադրում են, որ Երևանում գործունեություն ծավալող կազմակերպությունները քաղաքի տնտեսության կարևորագույն զղակներից է: Ընդ որում, ինչպես կազմակերպություններն են ազդում քաղաքի կենսագործունեության վրա, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններն են իրենց լիազորությունների իրականացման արդյունքում անխուսափելիորեն առնչվում քաղաքում տնտեսական գործունեություն ծավալող կազմակերպություններին: Առաջարկվող տարբերակում վերջիններս դառնում են քաղաքի կառավարման մարմինների կողմից մատուցվող հանրային ծառայությունների լիիրավ սպառողները: Միևնույն ժամանակ, հասկանալի է, որ տարբեր ոլորտներում գործող կազմակերպությունները կարող են տիրապետել համապատասխան մասնագիտական

փորձի, ինչը կարող է օգտակար լինել տեղական ինքնակառավարման մարմինների համար քաղաքային տնտեսության այս կամ այն բնագավառում առավել հիմնավոր որոշումներ ընդունելու տեսանկյունից: **Ընդհանրացնելով ներկայացված հաշվարկները և հիմնավորումները՝ առաջարկվում է, որ Երևանում գործող կազմակերպությունները Երևանի բյուջեի ծախսերի մինչև 10%-ի սահմաններում հնարավորություն ունենան սահմանելու ծախսային գերակայություններ, որոնք պետք է պարտադիր կատարվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այնքանով, որքանով համապատասխանում են օրենքով վերջիններիս վերապահված լիազորություններին:** Որպեսզի հնարավոր լինի խուսափել անճշտություններից, 10%-ը պետք է հաշվարկվի նախորդ տարվա բյուջեի ծախսերի հիման վրա, և բացարձակ գումարը տարածվի հաջորդ բյուջետային տարվա վրա: Օրինակ, եթե 2013թ.-ի Երևանի բյուջեի ծախսերի հաստատված պլանը եղել է շուրջ **66 մլրդ** ՀՀ դրամ, ապա 2014թ.-ի բյուջեի մշակման գործընթացում Երևանում գործող կազմակերպությունները կարող են որոշել ծախսային գերակայություններ **6.6 մլրդ** ՀՀ դրամի սահմաններում (մասնակցային բյուջե): Գծապատկեր 3-ում ներկայացված է կազմակերպությունների մասնակցությամբ Երևանի բյուջեի մշակման գործընթացը:

Գծապատկեր 3. Երևան քաղաքում գործող կազմակերպությունների մասնակցությամբ բյուջեի մշակման գործընթացը



Այսպիսի կապերի ապահովման արդյունքում կարմատավորվի տեղական ինքնակառավարմանը կազմակերպությունների մասնակցությամբ սահմանակարգը, ինչը ժամանակակից քաղաքի կայուն և համակողմանի զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն է: **Եվ վերջապես՝ տեղական ինքնակառավարմանը կազմակերպությունների մասնակցության մշակված կառուցակարգը հնարավոր կլինի կիրառել ոչ միայն Երևան քաղաքում, այլ նաև ամբողջ հանրապետությունում՝ տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակի գործարկման պարագայում, որը նախատեսում է առավել խոշոր միավորների կազմավորում որպես տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակ: Այս տեսանկյունից, ևս մեկ անգամ հաստատվում է աշխատանքում առաջ քաշված այն մտեցումը, որ տեղական ինքնակառավարման առավել խոշոր միավորները (որպես երկրորդ մակարդակ) նկարագրված դժվարություններով հանդերձ նոր հնարավորություններ են ընձեռում մասնակցային կառավարման զարգացման համար:**

Ատենախոսության «Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության էական նշանակություն ունեցող արդյունքները և առանձնացվել են հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները, մասնավորապես՝

⇒ Ներկա պայմաններում արտաքին միջավայրի մարտահրավերներից դիմակայելու համար խմբային մասնակցության մոդելը համարվում է լավագույնը՝ մի կողմ մղելով թե՛ միահեծան և թե՛ ազատական մոդելներին: Որպեսզի հնարավոր լինի արձագան-

քել գլոբալ հիմնախնդիրներին, կառավարման համակարգերը կարիք ունեն լրացուցիչ ազդակների, որոնք կարող են ձեռք բերվել կազմակերպական բոլոր ռեսուրսների լավագույն օգտագործման շնորհիվ: Ընդ որում՝ մասնակցային կառավարման երևույթը կարելի է դիտարկել որպես կառավարման ներկա հարացույցի դրսևորում:

⇒ Կառավարման հարացույցի զարգացման միտումները վկայում են, որ հատկապես ապագայում կազմակերպությունները և կառավարման համակարգերը պահանջելու են կառավարման և առաջնորդման այնպիսի ոճեր, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն առկա բոլոր տաղանդների և կարողությունների առաջնդման՝ հաջողության հասնելու նպատակով: Այս իրավիճակում կառավարիչները կան առաջնորդները աստիճանաբար ձգտում են կառավարման այնպիսի համակարգի, որը ոչ այնքան կառավարվում է վերևից, որքան որ ներսից՝ իբրև համագործակցության վրա հիմնված քննարկյալ կառավարում:

⇒ Մասնակցային կառավարման պարագայում կառավարիչները համակարգված կերպով օգտագործում են անհատների կամ նրանց խմբերի մարդկային ռեսուրսները՝ դրական արդյունք ապահովելու նպատակով: Կառավարմանը ցուցաբերվող այս մոտեցումը միտված է զորացնելու կազմակերպության բոլոր անդամներին և բարձրացնելու կազմակերպության գործունեության արդյունավետությունը ղեկավարների և ենթակամների միջև իշխանության և լիազորությունների աստիճանական բաշխման միջոցով:

⇒ Կառավարման բնագավառում ժողովրդավարական տարրերի արմատավորումը համապիտանի բնույթ է կրում՝ անկախ կառավարման օբյեկտի տեսակից և կառավարման մակարդակից: Այս անխուսափելի գործընթացը նախևառաջ պայմանավորված է մարդկության և հասարակության զարգացման բնական ընթացքով, որի արդյունքում աստիճանաբար փոփոխության են ենթարկվում մարդկանց պահանջումները և մտածելակերպը:

⇒ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության որոշակի սահմանափակ փորձ կուտակվել է: Սակայն, աշխատանքում կատարած հետազոտությունները փաստում են, որ, ցավոք, այդ փորձը գերակշռաբար սահմանափակվել է կամ՝ միջազգային կազմակերպությունների գործունեությամբ, կամ՝ տեղական հասարակական կազմակերպությունների, որոնք ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից:

⇒ ՀՀ-ում դեռևս անհրաժեշտ մակարդակով չի ապահովվում տեղական բյուջեի հրապարակայնությունը: Շատ դեպքերում պարզապես չեն կատարվում օրենքի համապատասխան պահանջները, իսկ կատարման դեպքում էլ բնակիչներն են հաճախ ցուցաբերում ակնհայտ անտարբերություն: Բնակիչների մեծ մասը նույնիսկ տեղյակ չէ մանուկում բյուջեի նախագծի հրապարակումներին կամ վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուների ու գրքույկների մասին: Այս անտարբերությանը և անտեղյակությանը նպաստում է նաև ավագանու նիստերի գերակշռաբար դեմոկրատիկ լինելը՝ թեև օրենքով պայգանու նիստերը պետք է լինեն հրապարակային: Խնդիրն այն է, որ բնակիչները չեն կարող շահագրգռված լինել բյուջեի մասին տվյալներ պարունակող տեղեկատուների ընթերցմամբ, եթե զգում են, որ կտրված են բյուջեի մշակման և քննարկման գործընթացներից, և ոչ ոք իրենց կարծիքը, տեսակետը չի հարցրել, առավել ևս՝ հաշվի առել:

⇒ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարումը կարգավորող իրավական դաշտը գնահատելու համար աշխատանքում կիրառվել է Արնշտայնի՝ բնակիչների մասնակցության սանդղակը, որում նախապես կատարվել են որոշակի փոփոխություններ, որպեսզի այն առավելապես համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում մասնակցային կառավարման ներկա հնարավորություններին և փաստացի վիճակին: Ընդհանուր առմամբ, վերլուծության արդյունքները և դրանց ամփոփումը ակնհայտորեն մատնանշում են որ ոլորտը կարգավորող դրույթները գերակշռաբար կենտրոնացված են ներկայացված սանդղակի 3-րդ՝ «Իրազեկում» աստիճանում և բավական կտրված են մասնակցության բարձր աստիճաններից: Իհարկե, կախված համապա-

տասխան դրույթների փաստացի կիրառման դրսևորումներից, դրանք կարող են տատանվել մի քանի աստիճաններում, սակայն ակնհայտ է նաև, որ մասնակցության վերին աստիճանը, այն է՝ «բնակիչների ուղղակի ազդեցությունը», գրեթե բացակայում է Հայաստանի Հանրապետությունում:

⇒ Ժամանակակից համաշխարհային միտումների ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ քաղաքների կառավարման առաջիկա խնդիրները պայմանավորված են լինելու գերակշռաբար քաղաքակենտրոնացման, գլոբալացման, ապակենտրոնացման, կառավարող-կառավարվող գիտելիքների մակարդակի մերձեցման, ինչպես նաև ժողովրդավարացման գործընթացների համատեղ ընթացքով, որոնցից յուրաքանչյուրը առանձին, ինչպես նաև նրանց միասնությունը անհրաժեշտաբար պահանջելու են տեղական ինքնակառավարման գործընթացներին մասնակից դարձնել քաղաքային տնտեսության բոլոր շահառուներին:

⇒ Հանրապետության մասշտաբով երևան քաղաքի ունեցած հզոր տնտեսական ներուժով հանդերձ պետք է փաստել, որ մայրաքաղաքում տեղական ինքնակառավարման համակարգը թե՛ ֆինանսական, թե՛ լիազորությունների ապակենտրոնացման տեսանկյուններից բավական թույլ է և սահմանափակ: Այս հանգամանքը, անշուշտ, մարտահրավեր է նաև արդյունավետ մասնակցային կառավարման տեսանկյունից, քանի որ, քաղաքը, ըստ էության, «ինքնակառավարվում է» խիստ սահմանափակ մասով:

⇒ Աշխատանքում կատարված տնտեսաչափական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վրա ազդող հիմնական գործոնները, հասկանալու, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ աստիճանի ազդեցություն է ունենում բնակիչների պոտենցիալ մասնակցության վրա և կանխատեսելու վերջիններիս հնարավոր ակտիվ մասնակցությունը: Տնտեսաչափական վերլուծության արդյունքում բացահայտվել են նաև բնակիչների մասնակցության և որոշ փոփոխականների միջև գոյություն ունեցող անհատական կապերը, ինչը կարող է հնարավորություն տալ տեղական ինքնակառավարման մարմիններին առավել կողմնորոշված և նպատակային քաղաքականություն վարելու կառավարմանը բնակիչների մասնակցությունը ապահովելու գործում:

⇒ Եկանտային խմբերի տեսանկյունից կառավարմանը մասնակցելու ամենամեծ պոտենցիալը առկա է միջին եկամուտ ունեցող բնակիչների շրջանում: Եկամուտների մակարդակի և պոտենցիալ մասնակցության միջև այս տեսակ կապի բացահայտումը օգտակար կարող է լինել ոչ միայն տեղական ինքնակառավարմանը բնակիչների ակտիվ մասնակցությունը ապահովելու գործում, այլև, առհասարակ, տնտեսության հանրային կառավարման բնագավառում թե՛ տեսության զարգացման, թե՛ կառավարման արդյունավետության բարձրացման առումով:

⇒ Ստացված արդյունքները վկայում են, որ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության գործընթացը չափազանց մեծ չափով պայմանավորված է քաղաքական գործոններով, ինչը, ըստ էության, խոչընդոտում է արդյունավետ մասնակցությանը, իսկ բնակչության այն հատվածը, որը պատրաստակամություն է հայտնում ակտիվ մասնակցություն ունենալու, գերակշռաբար տեղական ինքնակառավարման մարմինների կամքը արտահայտող հատվածն է ներկայացնում: Այս հանգամանքը ոչ միայն խոչընդոտում է արդյունավետ մասնակցային կառավարման իրականացմանը մայրաքաղաքում, այլ նաև հուշում, որ բնակիչների մասնակցության կառուցակարգերը պետք է վերափոխվեն և կատարելագործվեն:

⇒ Քանակական վերլուծությունները ցույց են տալիս, որ մասնակցության առկա ձևերը արդյունավետ չեն, և բնակիչների մի ստվար զանգված հրաժարվում է հետազայում մասնակցության գաղափարից՝ մի շարք պատճառներով դժգոհ լինելով մասնակցության նախորդ փորձի արդյունքներից:

⇒ Եթե չդիտարկենք կառավարմանը մասնակցություն չունենալու բնակիչների այն օբյեկտիվ պատճառները, որոնք կապված չեն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հետ (Ժամանակի պակաս, հետաքրքրված չլինել), ապա

ակնհայտորեն առանձնանում են երկու կարևորագույն խոչընդոտ, որոնց հաղթահարումը պետք է դրված լինի ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման զարգացման հիմքում: Դրանք են իրազեկվածության ցածր աստիճանը և մասնակցության արդյունքների նկատմամբ թերահավատությունը:

⇒ Անհրաժեշտ է համարվում տեղական հանրաքվեի սահմանակարգի բարեփոխումը, ինչ արդյունքում նախ՝ վերջինիս զուտ խորհրդատվական դերը պետք է լրացվի պարտադիր կատարման տարրերով, և հետո՝ պետք է վերանայվեն այն խիստ սահմանափակումները, որոնք դրված են ՀՀ-ում տեղական հանրաքվեների անցկացման հիմքում: Միայն այն հանգամանքը, որ օրենքի ընդունումից հետո մինչ այժմ ՀՀ-ում տեղական հանրաքվեի անցկացման որևէ նախադեպ չի եղել, արդեն փաստում է, որ ներկա օրենսդրական լուծումներով տեղական հանրաքվեի սահմանակարգը մեր երկրում որևէ դեր չունի: Բնակիչներին սեփական համայնքի ղեկավարին հետևակաչելու հնարավորության ընձեռումը կարող է միտված լինել միայն համայնքի ղեկավարի պատասխանատվության և զգոնության բարձրացմանը, ինչի արդյունքում անխուսափելիորեն կբարձրանա տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը: Սակայն, հետևանքի կառուցակարգը պետք է ներառի համապատասխան տարրեր, որոնք կբացառեն դրա անհարկի չարաշահումը տարբեր շահերի խմբերի կողմից:

⇒ Անհրաժեշտ է նաև վարչական շրջանների մակարդակով խորհրդակցական խորհուրդները վերափոխել մասնակցային խորհուրդների: Բացի դրանից, առաջարկվող երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի պայմաններում (խոշորացված միավորները՝ որպես վերին մակարդակ) հնարավոր կլինի կիրառել մասնակցային բյուջետավարման ներկայացված կառուցակարգը ամբողջ հանրապետությունում, որի դեպքում վարչական շրջանների գործառույթը կիրականացնեն ստորին մակարդակի տեղական ինքնակառավարման մարմինները:

⇒ Քննարկելով տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության նոր կառուցակարգերի ներդրման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը՝ հնարավոր է դառնում փաստել, որ կառավարման խոշոր միավորները մի կողմից՝ առավել բարդացնում են բնակիչների անմիջական մասնակցության հարցը, սակայն մյուս կողմից՝ լրացուցիչ հնարավորություններ են ապահովում՝ օգտագործելու կուտակված հսկայական ներուժը: Առհասարակ, բնակիչների մասնակցության իրավունքը ժամանակակից պայմաններում կարելի է դիտարկել իբրև ժողովրդավարության և տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Վերջինս, լինելով ավելի տարողունակ երևույթ, քան տնտեսական աճը, կարող է ապահովվել միայն ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման պարագայում, ինչը, իր հերթին, ենթադրում է հանրային կառավարման տարբեր մակարդակներում բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգերի մշակում և ներդրում: Հեղինակի մոտեցմամբ՝ այս նպատակներին հասնելու լավագույն մոտեցումը ժողովրդավարական կառավարման համակարգի վարից վեր զարգացումն է՝ սկսելով տեղական մակարդակից: Սա կարող է հիմնավորվել այն հանգամանքով, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը անմիջապես առնչվում է բնակիչների կենցաղին, կենսագործունեությանը և նրանց առօրյա խնդիրներին: Բացի դրանից, պետական կառավարման հիմնախնդիրների համեմատ՝ տեղական մշակակության խնդիրները ավելի մեծ հաջողությամբ կարող են լուծվել բնակիչների մասնակցությամբ: Այս առումով, տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման արմատավորումը կարող է դիտվել ոչ միայն որպես տեղական ինքնակառավարման զարգացման ուղի, այլ նաև որպես մեկնակետ՝ վարից վեր սկզբունքով հանրային կառավարման ամբողջ համակարգը բարեփոխելու համար:

⇒ Հանրային կառավարման հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ գործարարության զարգացումը մշտապես եղել է պետական կառավարման մարմինների գործառույթը, բավական ցածր է ապակենտրոնացման մակարդակը համայնքի գործարարության զարգացման բնագավառում, մասնավոր հատվածի և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները հասցվել են նվազագույնի, և հետևաբար՝ երկու կողմերի

համար էլ բացակայում են այն խթանները, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել կազմակերպությունների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

⇒ Հաշվի առնելով երկրի տնտեսությունում մայրաքաղաք Երևանի հսկայական մասնաբաժինը, ինչպես նաև դրա միջոցով սեփական եկամուտներ ապահովելու զգալի ներուժը՝ վերանայման կարիք ունի քաղաքի ֆինանսական կառավարման մոդելը, ինչը պետք է ենթադրի սեփական եկամուտների մասնաբաժնի ավելացում՝ ի հաշիվ Երևանում գործող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերից կատարվող մասհանումների: Սա պետք է խրախուսի նաև քաղաքի կառավարման մարմիններին, որ վերջիններս շահագրգռված լինեն ինչպես գործարարության զարգացմամբ, այնպես էլ կառավարմանը կազմակերպությունների մասնակցությունը ապահովելու գործում: Երևան քաղաքի բյուջեի եկամուտները պետք է կապված լինեն քաղաքի տնտեսական ակտիվության հետ, մասնավորապես՝ դրանք պետք է ավելանան քաղաքի տնտեսության աճին զուգընթաց և հակառակը:

⇒ Համայնքների բյուջեներին ԱԶԻ-ից և շահութահարկից մասհանումներ կատարելը առաջացնում է որոշակի խնդիրներ: Մի սկզբունքի դեպքում («ծագման վայրի») հիմնական հարկային բեռը կրող սպառողների համայնքի բյուջեն կարող է անմասն մնալ հարկային եկամուտներից: Այսպես, հաշվի առնելով տնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ սպառման շուկան, համայնքը կարող է զրկվել այն եկամուտներից, որոնք որ ձևավորվել են բնակիչների հարկերի հաշվին: Իսկ մյուս սկզբունքի դեպքում («նշանակման վայրի») վերոնշյալ պատճառներով բավական խնդրահարույց են դառնում հարկային բազայի ճշգրիտ հաշվարկումը և արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը: Տեղական բյուջեի և կազմակերպությունների եկամուտների միջև կապի ապահովման համար առավել նպատակահարմար է մասհանումներ կատարել կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարվող եկամտային հարկից: Վերջինս տարածքային բաշխման առումով ամենակայուն հարկային բազա ունեցող հարկատեսակն է, որը կարող է թույլ տալ տեղական ինքնակառավարման մարմիններին առավել արդյունավետորեն և արդարացիորեն ֆինանսավորելու համայնքային ծառայությունների մատուցումը: Շատ կարևոր է, որ այդ մասհանումների տոկոսադրույքները հստակորեն սահմանվեն օրենքով: Սա անհրաժեշտ է այն բանի համար, որ տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորություն ունենան իրականացնելու սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորում և նախօրոք տեղյակ լինեն, թե մոտավորապես ինչ եկամուտներ են ունենալու նախատեսվող ծախսային ծրագրերն իրականացնելու համար:

⇒ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշակված կառուցակարգով համապատասխան կազմակերպությունները իրենց գործունեությամբ նպաստում են Երևան քաղաքի բյուջեի ֆինանսական մուտքերի ավելացմանը՝ Երևանում կարող է կիրառվել մասնակցային բյուջետավարման կառուցակարգը, որի դեպքում Երևանում տնտեսական գործունեություն ծավալող կազմակերպությունները հնարավորություն կունենան որոշակի սահմաններում ուղղակիորեն որոշելու Երևան համայնքի բյուջեի ծախսերի ուղղությունները: Տեղական ինքնակառավարմանը կազմակերպությունների մասնակցության մշակված կառուցակարգը հնարավոր կլինի կիրառել ոչ միայն Երևան քաղաքում, այլ նաև ամբողջ հանրապետությունում՝ տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակի գործարկման պարագայում, որը նախատեսում է առավել խոշոր միավորների կազմավորում՝ որպես տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակ: Այս տեսանկյունից, ևս մեկ անգամ հաստատվում է աշխատանքում առաջ քաշվող այն մոտեցումը, որ տեղական ինքնակառավարման առավել խոշոր միավորները (որպես երկրորդ մակարդակ) նկարագրված դժվարություններով հանդերձ նոր հնարավորություններ են ընձեռում մասնակցային կառավարման զարգացման համար:

Ատենախոսությունում արված հետազոտության արդյունքների կիրառումը հնարավորություն կտա արձատավորելու և զարգացնելու մասնակցային կառավարումը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում: Եվ, հաշվի առնելով մասնակցային կառավարման անհրաժեշտությունը ժամանակակից պայմաններում, կարելի է պնդել, որ այն ամբողջ հանրապետության կայուն զարգացման անհրաժեշտ պայման է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Հայրապետյան Ռ., Երևան քաղաքի կառավարման հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում, Բանբեր Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ, #3 /123/, 2007թ., էջ 203-208:
2. Հայրապետյան Ռ., Միջհամայնքային միավորումների ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, #3 /12/, 2007թ., էջ 168-175:
3. Հայրապետյան Ռ., Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման և զարգացման ուղղությունները Երևան քաղաքում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Գիտաժողովի նյութեր/, ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, դեկտեմբեր, 2007թ., էջ 80-85:
4. Հայրապետյան Ռ., Խոշոր համայնքների կառավարման համաշխարհային փորձը, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 4 /93/, 2008թ., էջ 44-46:
5. Հայրապետյան Ռ., Ապակենտրոնացման դերը հանրային կառավարման համակարգում, Օրենք և իրականություն, #5 /151/, մայիս, 2008թ., էջ 38-41:
6. Հայրապետյան Ռ., Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման ուղղությունները, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 1-2 /102-103/, 2009թ., էջ 15-17:
7. Հայրապետյան Ռ., Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը ֆինանսական շուկայում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, #1 /16/, 2009թ., էջ 105-114:
8. Հայրապետյան Ռ., Երկաստիճան տեղական ինքնակառավարման ֆինանսական հիմնախնդիրները Երևան քաղաքում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, #2 /20/, 2010թ., էջ 47-57:
9. Հայրապետյան Ռ., Մասնակցային կառավարման հիմնախնդիրները ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 4 /142/, 2012թ., էջ 60-61:
10. Հայրապետյան Ռ., Քաղաքապետարան-համալսարան համագործակցության մեկնարկային ծրագիր. Երևան քաղաքի բյուջեի հրապարակայնության ապահովում, Հանրային կառավարման հիմնախնդիրներ/ՀՊՏՀ, խմբ. Յու.Ս. Սուվարյանի, Վ.Ա. Միրզոյանի.-Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2013, էջ 231-248:
11. Հայրապետյան Ռ., Տեղական ինքնակառավարումը որպես պետական գործառույթների ապակենտրոնացման եղանակ, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 10 /160/, 2013թ., էջ 27-29:
12. Մխիթարյան Խ., Հայրապետյան Ռ., Համբարձումյան Հ., Հարաբերական մրցակցային առավելությունները զբոսաշրջության ոլորտում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Գիտաժողովի նյութեր/, ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, դեկտեմբեր, 2013թ., գիրք 2 էջ 190-197:
13. Հայրապետյան Ռ., Խոշոր քաղաքների կառավարման մի քանի հարցի շուրջ, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2013թ., 10-12 (39), էջ 199-203:
14. Սուվարյան Յու., Շահնազարյան Ն., Մխիթարյան Խ., Հայրապետյան Ռ., Համբարձումյան Հ., Առաքելյան Մ., Ջրոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տնտեսագետ, 2014, 136 էջ:
15. Սուվարյան Յու., Հայրապետյան Ռ., Ասատրյանց Ս., Մնացականյան Տ., Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տնտեսագետ, 2014, («Ամբերդ» մատենաշար), 164 էջ:

16. Հայրապետյան Ռ., Հանրային և մասնավոր գործընկերությունը քաղաքների մասնակցային կառավարման համակարգում, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 4 /166/, 2014թ., էջ 2-4:
17. Հայրապետյան Ռ., Երևանի որպես խոշոր քաղաքի կառավարման առանձնահատկությունները, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 4 /166/, 2014թ., էջ 4-6:
18. Հայրապետյան Ռ., Մասնավոր հատվածի մասնակցությունը Երևան քաղաքի կառավարմանը, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Գիտաժողովի նյութեր/, ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, դեկտեմբեր, 2014թ., էջ 154-159:
19. Հայրապետյան Ռ., Մասնակցային կառավարման գործընթացի կարգավորման կառուցակարգերը ՀՀ-ում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Գիտաժողովի նյութեր/, ՀՀ ԳԱԱ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, դեկտեմբեր, 2014թ., էջ 159-166:
20. Սուվարյան, Յու., Հայրապետյան Ռ., Մասնակցային կառավարման մեթոդաբանությունը, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի #3 /35/, 2014թ., էջ 19-35:
21. Հայրապետյան Ռ., Տեղական հանրաքվեների նշանակությունը մասնակցային կառավարման համակարգում, «Ալլընտրանք» գիտական հանդես, #4, 2014, էջ 79-87:
22. Հայրապետյան Ռ., Մասնակցային բյուջետավարման ներդրման ուղղությունները Երևան քաղաքում, «Ալլընտրանք» գիտական հանդես, #4, 2014, էջ 13-22:
23. Айрапетян Р., Проблемы партисипативного управления в системе местного самоуправления Армении, Экономические науки в России и зарубежом, Материалы XIV международной научно-практической конференции, Москва (20.01.14), стр. 13-19.
24. Айрапетян Р., Теоретико-методологические основы партисипативного управления городом, Проблемы экономики и менеджмента N 1(29), Ижевск, январь 2014, стр. 4-10.
25. Айрапетян Р., Необходимость партисипативного управления в крупных городах, Гуманитарные, социально-экономические и гуманитарные науки, научный журнал, Москва, Выпуск №1-2014 г.
26. Айрапетян Р., Мердинян Г., Международный опыт развития партисипативного бюджетирования городов, Вопросы экономических наук, Краснодар, №1-2014 г., стр. 7-12.
27. Айрапетян Р., Партисипативное управление в крупных городах, LAP Lambert Academic Publishing, «OmniScriptum GmbH & Co. KG» ISBN-13: 978-3-659-52703-6, Saarbrücken, Germany, 2014-04-03, 92 стр.
28. Айрапетян Р., Концепция крупного города и особенности управления, Приволожский научный вестник № 5 (33), Ижевск, май 2014, стр. 92-96.
29. Айрапетян Р., Роль участия населения в управлении крупными городами, Актуальные вопросы науки, Материалы XIII Международной научно-практической конференции (25.04.2014), Москва, стр. 106-112.
30. Hayrapetyan R., Local Governance and the Role of Universities, The Fourth International Research Conference on Education, English Language Teaching, English Language and Literatures in English, Conference Proceedings, Tbilisi, 25-26 April, 2014, pp. 177-183.
31. Hayrapetyan R., Ensuring the Publicity of the Budget of Yerevan: The Possibilities of Cooperation between the City Hall and Universities, The 3rd Winter Seminar of Regional Science “Regional Economics in New Perspective”, High Tatras, Slovakia, March 20-23, 2013, pp. 1-14.
32. Suvaryan Yu., Mirzoyan V., Hayrapetyan R., Public Administration: Theory and History, Yerevan, “Gitutyun” Publishing House of the NAS RA, 2014, 301 p.
33. Hayrapetyan R., Ensuring the Publicity of Yerevan Budget, Review of Integrative Business and Economics Research, Volume 3 (2014), Issue 2 (July), Hong Kong, pp. 455-465.
34. Hayrapetyan R., The Role and Effectiveness of Local Governance in Public Administration System of Armenia, Review of Integrative Business and Economics Research, Volume 3 (2014), Issue 2 (July), Hong Kong, pp. 449-454.

НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ПАРТИСИПАТИВНОГО УПРАВЛЕНИЯ

В СИСТЕМЕ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ (ПО МАТЕРИАЛАМ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.02 - „Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 16-го апреля 2015г., в 14:00 часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г.Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена выявлению направлений развития партисипативного управления в системе местного самоуправления, и разработке эффективных механизмов с этой целью. Последние подразумевают участие различных заинтересованных сторон в управлении, а также создание зон связей и сотрудничества между ними, которое должно быть направлено на развитие системы местного самоуправления. Спектр заинтересованных сторон очень широка, поскольку процесс управления может касаться многих субъектов и их групп. Основной подход к партисипативному управлению заключается в постоянном процессе совместного решения проблем управления, в результате чего можно получать конкретные целевые результаты от сотрудничества и обеспечить положительный синергетический эффект. В таком ключе, идея партисипативного управления в данной работе рассматривается как более широкая проблема, нежели только участие местных жителей в процессе управления.

Партисипативное управление предполагает принципиально новое направление принятия решений и всего процесса управления, формирование комплексного подхода к развитию связывая устойчивость, социальную справедливость, экономическое развитие и свободу культуры. В этом отношении, изучая различные подходы и модели относительно проблемы, партисипативное управление рассматривается как необходимый элемент современной управленческой мысли и практики. Важным условием для фактического запуска указанных в работе концепций и структурных порядков, является разработка и применение политики, механизмов, указаний и других типов формальных правил участия. Без четких правил, регламента и механизмов, партисипативное управление не может работать эффективно.

В нашей стране было проведено множество ценных исследований в сфере местного самоуправления, в том числе несколько фрагментарных исследований касающихся партисипативного управления, однако, отсутствует всестороннее и комплексное исследование проблем и направлений развития партисипативного управления. А, обстоятельное исследование проблемы партисипативного управления в представленном в данной работе понимании, редко встречаются даже на всемирной научной арене. Учитывая вышеизложенную ситуацию и представленные проблемы, становится очевидной не только актуальность темы, но также необходимость и срочность ее детального изучения.

Научная новизна исследования в целом может быть обобщена в разработке теоретической основы и практических решений партисипативного управления в системе местного самоуправления, а также в выявлении направлений развития, что по сути является первой аналогичной попыткой в РА. В частности, научную новизну содержат следующие результаты исследования:

- в результате выявления современных тенденций изменения парадигмы менеджмента и стилей лидерства, уточнены проявления партисипативного управления в контексте командного управления;
- уточнена суть партисипативного управления, охарактеризованы факторы и механизмы партисипативного управления;
- в результате выявления современных закономерностей развития системы публичного управления, партисипативное управление охарактеризовано как ключевое направление демократизации управления;
- в исследовании выявлены национальные особенности партисипативного управления в системе местного самоуправления;
- на основе системного анализа нормативно-правовой базы регулирующей процесс партисипативного управления, оценена степень участия жителей в местном самоуправлении в соответствии с предварительно обоснованной методологией “лестницы участия”;
- в результате выявления современных тенденций парадигмы управления и развития крупных городов, по-новому интерпретирован феномен партисипативного управления и охарактеризованы особенности последнего, в крупных городах;
- в соответствии с методологией бинарной логистической регрессии, выполнен многофакторный анализ участия жителей в местном самоуправлении и разработана эконометрическая модель, прогнозирующая потенциальное участие;
- посредством количественного анализа выявлена связь между уровнем доходов и прямым участием жителей в управлении, в результате чего аргументирована важность формирования среднего класса в развитии партисипативного управления;
- в результате выявления основных препятствий на пути участия действующих в Ереване организаций в управлении городом, разработана новая концепция партисипативного бюджетирования, основанная на прямом участии организаций;
- на основе экспертных опросов и количественного анализа, предварительно выявив главные препятствия на пути активного участия жителей в местном самоуправлении, разработан новый механизм “партисипативных советов” с реальными финансовыми рычагами, и обоснована целесообразность их создания.

Применение результатов исследования даст возможность укоренить и развить партисипативное управление в системе местного самоуправления РА. И, учитывая значение партисипативного управления в современных условиях, можно утверждать, что это необходимое условие для устойчивого развития всего государства.

DIRECTIONS OF DEVELOPMENT OF PARTICIPATORY GOVERNANCE

IN LOCAL SELF-GOVERNMENT SYSTEM (BASED ON THE MATERIALS OF RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Science in the specialty 08.00.02 - "Economics, Management of Economy and its Spheres".

The defense of the thesis will take place on April 16, 2014, at 14:00 o'clock at 014 Council of Economics at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan str., Yerevan 0025.

ABSTRACT

The thesis is devoted to the revelation of the directions of the development of participatory governance in local government system and for this purpose - the development of effective mechanisms. The latter implies the involvement of different stakeholders in the governance and the creation of zones of communication and cooperation between them, which should be directed to the development of the system of local government. Scope of interest of the parties is very wide, as the management may concern many subjects and their groups. The basic approach to participatory governance is in a constant process of joint problem-solving by stakeholders, whereby it is possible to obtain specific target results from cooperation and provide a positive synergistic effect. In this sense, the idea of participatory governance in this work is seen as a broader issue than just the participation of local people in the governance process.

Participatory governance intends to fundamentally new direction of decision-making, and, in general, the whole process of management towards the formation of an integrated approach to development - linking sustainability, social justice, economic development and cultural freedom. In this regard, studying the different approaches and models regarding the problem, participatory governance is seen as an essential element of modern management thought and practice. An important condition for the actual launching of these concepts and structural orders, brought forward in the work, is the development and application of policies, mechanisms, indicators, and other types of formal rules of participation. Without clear rules, regulations and mechanisms, participatory governance cannot work efficiently.


In our country, significant level of valuable research has already been done in the field of local government, including some fragmentary studies relating to participatory governance, but there are no comprehensive and complex research studies on the problems and directions of development of participatory governance. Moreover, a detailed study on participatory governance as presented in this paper, is rare even on a global scientific arena. Given the above situation and presented problems, not only relevance of the topic, but also the necessity and urgency of its detailed study become apparent.

Scientific novelty of research in general can be summarized in the development of theoretical basis and practical solutions of participatory governance in local government system, as well as identifying directions for development, which is essentially the first similar attempt in RA. In particular, scientific novelty is contained in the following study results:

- based on the identification of the current trends in the paradigm of management and leadership styles, manifestations of participatory governance were clarified in the context of team management,
- the essence of participatory governance has been clarified, the factors and mechanisms of participatory governance have been characterized,

- By revealing the modern patterns of the development of public administration system, participatory governance has been characterized as a key direction in the democratization of governance,
- the study has identified national characteristics of participatory governance in local government system,
- based on the systematic analysis of the legal framework regulating the process of participatory governance, the extent of participation of citizens in local government has been assessed in compliance with prior supported methodology of the "ladder of participation",
- through the identification of trends in modern management paradigm and the development of large cities, the phenomenon of participatory governance has been reinterpreted and the features of the latter in the major cities have been characterized,
- in accordance with the methodology of binary logistic regression, multivariate analysis of residents' participation in local government has been carried out and an econometric model for predicting potential participation has been developed,
- through quantitative analysis the association between income and direct participation of citizens in governance has been identified, resulting in the substantiation of the importance of the middle class in the development of participatory governance,
- based on the identification of the main obstacles to the participation of organizations operating in Yerevan in urban management, a new concept of participatory budgeting, based on the direct participation of organizations has been developed,
- by pre-identifying the main obstacles to the active participation of citizens in local government on the basis of expert interviews and quantitative analysis, a new mechanism of "participatory councils" with real financial leverage has been developed, and the expediency of their creation has been substantiated.

The application of the research results will provide an opportunity to implant and develop participatory governance in local government system of Armenia. And, given the importance of participatory governance under the current circumstances, it can be argued that this is a necessary condition for sustainable development of the entire state.

A rectangular box containing a handwritten signature in dark ink on a light background. The signature is stylized and appears to be a cursive name.